Ազգ
Azg
8 ՓԵՏՐՈՒԱՐ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 20(4639)
ISSN: 1829-1651

# Սուդանի նախագահը ճանաչեց Հարավային Սուդանի հանրաքվեի արդյունքները

Հունվարի կեսերին անցկացված հանրաքվեով աֆրիկյան ամենամեծ երկիրը փաստորեն բաժանվեց երկու մասի: Ինչպես ավելի վաղ հայտնել է մեր թերթը, հարավսուդանցիների շուրջ 99 տոկոսը կողմ է արտահայտվել Հարավի անկախությանը Հյուսիսից: Նախագահ Օմար Բաշիրն, իր հերթին, ավելի վաղ հայտարարել է, որ կճանաչի հանրաքվեի արդյունքը: Փաստորեն երեկ աշխարհի քարտեզում դե յուրե հայտնվեց մի նոր երկիր, որի ազգաբնակչության ազատ կամարտահայտությամբ վերջ տրվեց շուրջ քսան տարի տեւած եւ միլիոնավոր սուդանցիների կյանք խլած խռովություններին եւ ազգամիջյան կռիվներին:

Այնուամենայնիվ, ըստ որոշ միջազգային փորձագետների, Հարավային Սուդան-նոր պետության առջեւ կկանգնեն այլ լուրջ խնդիրներ, ինչպիսիք են՝ տնտեսական տկարությունն ու էթնիկական հակամարտությունները:

Հ. Ա.

# Հովիկ Աբրահամյանը վստահ է, որ ՀՀԿ-ն է 50+1 տոկոս հավաքելու

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**



Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը երեկ Ազգային ժողովի նախասրահում շփվեց լրագրողների հետ եւ պատասխանեց մի շարք հրատապ հնչած հարցերի: Մեկնաբանելով իր հրաժարականի մասին լուրերը՝ նա նկատեց, որ «ամեն ինչ հնարավոր է, կարող է՝ խնդրեն, գնամ՝ հրաժարական տամ, Գալուստ Գրիգորիչն էլ դառնա ԱԺ նախագահ, ինչ վատ նախագահ կլինի՞ որ», այս վերջին մասը ԱԺ նախագահը կատակով էր ասում: Բայց լրջանալով՝ ավելացրեց նաեւ, թե այս պահի դրությամբ այնպիսի բան չկա, որ ինչ-որ պատգամավորներ հավաքվեն անվստահություն հայտնեն ԱԺ նախագահին: Հեռանալու պատճառ կարող է դառնալ նաեւ ՀՀԿ-ի որոշումը, բայց այդպիսի բան նույնպես չկա: Լրագրողները հիշեցրին ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի հայտարարությունը՝ 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին 50+1 տոկոս ձայն հավաքելու մասին. «Որպես ՀՀԿ երկրորդ դեմք հայտարարում եմ՝ 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ ՀՀԿ-ն է 50+1 տոկոս ձայն հավաքելու», ասաց ԱԺ նախագահը՝ նկատելով, որ բոլոր քաղաքական ուժերն էլ այդպիսի ցանկություն կարող են ունենալ եւ այդպիսի հայտարարություններ կարող են անել: Լրագրողներից մեկի ճշտող հարցին, թե 2013 թվականի նախագահական ընտրություններին իր թեկնածությունը չի՞ դնելու, նա պատասխանեց, որ երկրի նախագահ դառնալու ցանկություն չունի եւ իրեն բավարարում է խորհրդարանի նախագահի պաշտոնը. «Ո՛չ, ես հիմա նախագահ եմ՝ Ազգային ժողովի նախագահ: Դուք չեք պատկերացնում, թե հանրապետության նախագահի պաշտոնը որքան պատասխանատու եւ ծանր աշխատանք է: Մեր ազգի բացասական հատկանիշներից մեկն էլ այն է, որ բոլորն ուզում են նախագահ դառնալ, անկախ նրանից ՝ կարո՞ղ են աշխատել, թե՞ ոչ»: Ճշտող հարցերը շարունակվեցին՝ իսկ վարչապետ դառնալու ցանկություն ունի՞. «Վարչապետ մի ժամանակ ուզում էի, ազնիվ լինեմ, բայց հիմա չեմ ուզում, որովհետեւ իմ պաշտոնը վարչապետի պաշտոնից սահմանադրությամբ ավելի բարձր է», ասաց: Դիտարկմանը, թե խորհրդարանում թելադրող է կառավարությունը, Հ. Աբրահամյանը մի փոքր կտրուկ հակադարձեց. «Եթե կառավարության որեւէ անդամ՝ վարչապետը կամ այլ մեկը հայտարարի, թե ինքը կարող է թելադրել Ազգային ժողովում, ինքը կարող է երազախաբ լինել»:

Տես էջ 2

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ**

# ԱՄՆ-ը՝ հաստատակամ հայ-թուրքական հարցում

Անվտանգության քաղաքականության հարցերով մյունխենյան համաժողովի շրջանակներում նախագահ Սերժ Սարգսյանը փետրվարի 5-ին հանդիպել է Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղար Հիլարի Քլինթոնին: Ըստ պաշտոնական տեղեկատվության, նախագահը կարեւորել է Միացյալ Նահանգների ակտիվ դերակատարությունը ԼՂ հիմնախնդրի կարգավորման, ինչպես նաեւ տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության պահպանման գործում:

Անդրադառնալով Հայաստան-Թուրքիա հարաբերություններին՝ պետքարտուղարը շեշտել է Միացյալ Նահանգների հաստատակամությունը՝ աջակցելու երկու երկրների միջեւ բնականոն հարաբերություններ հաստատելու գործընթացին:

Ա. Հ.



# Կիպրացի թուրք ցուցարարները հայհոյանքներով դատապարտել են Թուրքիային

*Հայտարարելով այդ մասին վարչապետ Էրդողանը հյուսիսային հատվածի վարչակարգից պահանջում է պատժել «ամբարտավաններին»*



Հ. ՉԱՔՐՅԱՆ

**Փետրվարի 6-ին Ստամբուլի օդանավակայանում Սիրիա ուղեւորվելուց առաջ կազմակերպված ասուլիսում Թուրքիայի վարչապետ Էրդողանը Կիպրոսի Հանրապետության հետ համագործակցելու մեջ մեղադրեց կիպրացի թուրքերին: Դրա պատճառը դեռեւս հունվարի 28-ին Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայի թուրքական հատվածում կազմակերպված ցույցն է:**

**Թեեւ թուրքական լրատվամիջոցները, այդ թվում՝ վարչապետ Էրդողանի հետ սուր հակասությունների մեջ գտնվող «Դողան հոլդինգի» հրատարակած «Հյուրիեթ» եւ «Միլիեթ» թերթերը շրջանցել էին շուրջ երկու շաբաթվա վաղեմությամբ այդ ցույցը, նկատի ունենալով, որ Կիպրոսի հիմնախնդիրն ազգային հարց է, այնուամենայնիվ, Էրդողանի մեղադրանքներին անդրադառնալիս, նրանք ստիպված որոշակի տեղեկություններ հայտնեցին:**

**Թուրքական լրատվամիջոցներին ասուլիսում լրացրեց վարչապետ Էրդողանը: Որքան էլ այդ տեղեկությունները կցկտուր լինեն, կիպրացի թուրքերը «Կիպրոսի միասնականության» կարգախոսով, հուներեն եւ թուրքերեն ցուցապաստառներով դատապարտել են Թուքիային եւ պահանջել, որ չբռնանան կիպրացիների կամքի վրա՝ վերջ տալով անհարկի միջամտությանը: Ընդ որում, ցուցարարները կրել են Կիպրոսի Հանրապետության դրոշներ, չունենալով իրենց ձեռքին գեթ մեկ թուրքական դրոշ:**

Տես էջ 5

# Կամբոջան օգնություն է խնդրել ՄԱԿ-ից՝ ընդդեմ «թաիլանդական ագրեսիայի»

Արդեն հինգերորդ օրը շարունակվում են կրակոցները Կամբոջայի եւ Թաիլանդի սահմանին: Ընդ որում՝ կրակոցները ոչ միայն հրազենից են, այլեւ հրետանային, արդեն զոհվել է 5 մարդ: Այս կապակցությամբ Կամբոջայի վարչապետ Հուն Սենը դիմել ՄԱԿ-ին, որպեսզի վերջինս ուղարկի հավելյալ խաղաղարարներ՝ «թաիլանդական ագրեսիային դիմակայելու համար»: Կամբոջան ու Թաիլանդը «չեն կիսում» Պրեահ Վիհեար սրբատեղիի մերձակայքը, որը գտնվում է հիմնականում ՄԱԿ-ի վերահսկողության տակ:

Հ. Ա.

# Պաշտպանության նախարարության պատվիրակությունը Մոսկվայում

Այս տարվա հոկտեմբերին Հայաստանում անցկացվելիք ՀԱՊԿ-ի արագ արձագանքման հավաքական ուժերի հետ համատեղ «Փոխգործակցություն-2011» օպերատիվ-տակտիկական զորավարժության անցկացման վերաբերյալ նախնական քննարկումներին մասնակցելու նպատակով երեկ Մոսկվա է մեկնել ՀՀ զինված ուժերի պատվիրակությունը՝ ՀՀ ԶՈՒ ԳՇ օպերատիվ վարչության պետ, գեներալ-մայոր Արտակ Դավթյանի գլխավորությամբ: ՊՆ-ից տեղեկացնում են, որ փետրվարի 8-9 անցկացվող խորհրդակցությանը, որին, ՀՀ ԶՈՒ պատվիրակությունից բացի, մասնակցելու են ՌԴ ՊՆ, ՀԱՊԿ-ի միացյալ շտաբի եւ ՀԱՊԿ-ի անդամ պետությունների զինված ուժերի ներկայացուցիչները, կքննարկվեն զորավարժության նախապատրաստմանն ու անցկացմանն առնչվող կազմակերպչական հարցեր:

Հ. Ա.

# Վարդանյան ընտանիքի ընկերությունների վճարած հարկերը 3-րդն են

Վերջերս ՊԵԿ-ը հրապարակեց ՀՀ 2010 ֆինանսական տարում առաջին խոշոր 300 հարկատուների վճարած հարկերի եւ տուրքերի մեծությունների ցանկը: Վարդանյան ընտանիքին պատկանող ձեռնարկություններից ցանկի մեջ ընդգրկված ընկերությունների ցանկը եւ նրանց վճարած հարկերի մեծությունը հետեւյալն է. «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ»՝ 7 մլրդ 968մլն դրամ, «Գրանդ Տոբակո»՝ 3 մլրդ 993 մլն դրամ, «Գրանդ Քենդի»՝ 1 մլրդ 343 մլն դրամ, «Մասիս Տոբակո» ՄՎ՝ 940 մլն 956 հազ. դրամ, «Մասիս Իմպորտ-Էքսպորտ»՝ 246 մլն 868 հազ. դրամ, «Անուշ Լինի»՝ 203 մլն 864 հազ. դրամ եւ «Ռումավա»՝ 160 մլն 918 հազ. դրամ: Բոլոր ընկերությունները միասին վճարել են 14 մլրդ 911 մլն դրամ հարկեր եւ տուրքեր: Այս ցուցանիշով Վարդանյան ընտանիքին պատկանող ընկերությունները 300 խոշոր հարկատուների ցանկում զբաղեցնում են 3-րդ տեղը: Նշենք նաեւ, որ այս ընկերությունները միասին ապահովում են 4500 աշխատատեղ արտադրության մեջ եւ հազարավոր աշխատատեղեր գյուղատնտեսության ոլորտում:

**«Գրանդ Հոլդինգի» մամուլի ծառայություն**

# Ինչպիսի՞ն է եղել անշարժ գույքի շուկան 2010-ին

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2010-ին Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 173983 գործարք, ինչը 12,6 տոկոսով բարձր է 2009-ի գործարքների համեմատ: Օտարման գործարքների թիվը կազմել է 45353, որից առուվաճառքներինը կազմել է 80,2 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38,1 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում: 2010-ին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը 2009-ի համեմատ աճել է 8,6 տոկոսով:

Մայրաքաղաքում 13119 առուվաճառքի գործարքների 65,8 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2009-ի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում 2010-ին աճել է 12,8 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում 2010-ին 2009-ի համեմատ աճել են 2,5 տոկոսով:

Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | |
|---|---|---|
| | 2009թ. | 2010թ. |
| Կենտրոն | 471600 | 462900 |
| Արաբկիր | 358600 | 377400 |
| Քանաքեռ-Զեյթուն | 276300 | 285700 |
| Նոր Նորք | 230800 | 236000 |
| Ավան | 232800 | 240300 |
| Էրեբունի | 247100 | 248700 |
| Շենգավիթ | 241900 | 250900 |
| Դավթաշեն | 261100 | 272300 |
| Աջափնյակ | 235900 | 235900 |
| Մալաթիա-Սեբաստիա | 226400 | 239300 |
| Նուբարաշեն | 141800 | 146600 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 265800 | 272400 |

Տես էջ 4

ԱԶԳ

## Ընթացիկ

# Պահպանել հայի ոգին ու կապը հայրենիքի հետ

Հեռավոր Բառնաուլի հայ բնակիչների նպատակներից մեկը հայապահպանությունն է: Բառնաուլ քաղաքը Ռուսաստանի Ալթայի երկրամասի կենտրոնն է: Բառնաուլում շուրջ 30 հազար հայեր են ապրում, նրանցից մեկը մասնագիտությամբ բժիշկ **Վարդան Գրիգորյանն** է: Նա Հայաստանից գնացել է 1994 թվականին: Դեռ 1990-ականներից Վարդան Գրիգորյանը Բառնաուլում բնակվող մյուս հայերի հետ որոշում է անել հնարավոր ամեն ինչ ազգային ու հոգեւոր արժեքների, հայկական սովորույթների պահպանման համար: Բառնաուլում հիմա գործում են Ս. Հռիփսիմե հայկական եկեղեցին եւ կիրակնօրյա հայկական դպրոց, որտեղ հաճախում են շուրջ 30 երեխաներ, նաեւ ստեղծվել է «Ալթայի երկրամասի հայերի միություն» կազմակերպությունը: Վարդան Գրիգորյանը վարչական կենտրոնի անդամներից է: Նա ասում է, որ իրենց կենտրոնը շատ ֆինանսավորում չի ստանում. «Ինչ-որ տեղերից գտնում ենք հովանավորների, բայց հիմնականում գումար են տրամադրում մեր անդամները»: Վարչության անդամները տալիս են անդամավճար` ամսական ով ինչքան կարող է: Ըստ Վ. Գրիգորյանի` անդամավճարներից քիչ գումար է հավաքվում, ինչն էլ հիմնականում հատկացվում է«Սփյուռք» ամսագրի հրատարակմանը, հայկական դպրոցին, այդ գումարից են նաեւ աշխատավարձ տալիս մանկավարժներին եւ փակում միջոցառումների կազմակերպման ծախսերը: Վարդան Գրիգորյանը պատմում է, որ Բառնաուլում ապրող հայերին հաջողվել է հիմնել «Սփյուռք» երկլեզու ամսագիրը, որը լույս է տեսնում 1999 թվականից: Տարիների ընթացքում ամսագիրը շատ է փոխվել թե՛ բովանդակության, թե՛ որակի առումով, հիմա տպագրվում է հայերեն ու ռուսերեն լեզուներով: «Եթե ֆինանսական միջոցները ներում են, «Սփյուռքը» ամեն ամիս հրատարակվում է», ավելացնում է Վարդան Գրիգորյանը, որը ամսագրի հիմնադիրներից է, ժամանակին խմբագրել է, իսկ ներկայումս վարում է մանկական բաժինը: Ամսագրի տպաքանակը հասնում է 300-ի, առաջ ավելի քիչ է եղել: Վ. Գրիգորյանը տեղեկացնում է, որ ամսագիրն անվճար է բաժանվում. «Մեր նպատակն է Բառնաուլում հնարավոր չափով պահպանել հայկական մթնոլորտն ու հայերի միասնությունը»: «Սփյուռքը» ունի քաղաքական եւ արվեստի նորությունների, պատմության, գրականության, մանկական եւ այլ բաժիններ: «Այս տարի էլ շարունակելու ենք նույն ոգով», ավելացնում է Վարդան Գրիգորյանը:

Բառնաուլում տարվա մեջ պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ, որոնց նպատակն է հայերին հայկական մշակույթին հաղորդակից դարձնելը: «Մեր աշխատանքը նաեւ ուղղված է հայրենիքի հետ մեր կապն ամուր պահելուն», նշում է զրուցակիցս:

Կազմակերպչական հարցերով զբաղվում են վարչական կենտրոնը, կիրակնօրյա դպրոցի տնօրենն ու մանկավարժները:


ДИАСПОРА
Սփյուռք
№ 7 (38) 2010 г
В НОМЕРЕ:
- События:
ПРОГРАММА «АРИ ТУН» СОБРАЛА АРМЯНСКУЮ МОЛОДЁЖЬ СО ВСЕГО МИРА
ШВЕЦИЯ ПРИЗНАЛА ГЕНОЦИД АРМЯН
КОНЦЕРТ В НОВОСИБИРСКЕ
В БАРНАУЛЕ ПРОШЕЛ КОНЦЕРТ ПОПУЛЯРНОЙ ПЕВИЦЫ НАНА
НАЗИК АВДАЛЯН – ЧЕМПИОНКА МИРА ПО ТЯЖЕЛОЙ АТЛЕТИКЕ
- Армянский раздел
- Детский раздел

Անցյալ տարի նաեւ հրատարակվել է «Սփյուռքի» առանձին համար` նվիրված Մեծ եղեռնի տարելիցին: Բառնաուլում ամեն տարի ապրիլի 24-ը հիշվում է առանձնակի ձեւով: Բացի ամսագրի հատուկ թողարկումից` Վ. Գրիգորյանն ասում է, որ 2010-ին բեմադրել են Ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված ներկայացում` «Երկխոսություն մեկ դար անց», որի սցենարի հեղինակն ու բեմադրող ռեժիսորը եղել է Վարդան Գրիգորյանը: Ապրիլի 24-ին եղել են նաեւ ասմունք, ազգային պար եւ դուդուկի կենդանի նվագակցություն:

Բառնաուլում հայերը հիմնականում զբաղվում են շինարարությամբ: Ինչպես Ռուսաստանում ապրող շատ հայեր, Վարդան Գրիգորյանը նույնպես ստիպված է եղել թողնել իր մասնագիտությունն ու տարբեր աշխատանքներ կատարել ապրուստ հայթայթելու համար: Չնայած զբաղվածությանը` նրան միշտ մտահոգել են համայնքում հայապահպանության խնդիրները: Դրա համար էլ նա ձեռնամուխ է եղել ամսագրի հրատարակմանն ու տարբեր միջոցառումների կազմակերպմանը: Վարդան Գրիգորյանը նաեւ բանաստեղծություններ եւ պատմվածքներ է գրում: Մինչեւ Հայաստանից մեկնելն այստեղ տպագրվել է, հիմա տպագրվում է միայն «Սփյուռք» ամսագրում: Ասում է, որ շփվել է Հովհաննես Շիրազի, Վարդգես Պետրոսյանի, Վահագն Դավթյանի հետ:

Հեռավոր Ալթայի եկրամասում հայկական մշակույթն ու լեզուն պահպանելը շատ դժվար է: «Հայկական ամեն բան պահպանելու համար պետք է առաջ շարժվել, տեղում կանգնել չի կարելի», ավելացնում է Վարդան Գրիգորյանը:

Ովքեր ուզում են ծանոթանալ «Սփյուռք» ամսագրին, կարող են զանգել Վարդան Գրիգորյանին 770079132104118 համարով:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Զինված ուժերի հոգեւոր առաջնորդները Պրահայում

Հունվարի 28-ից փետրվարի 4-ը Պրահայում ՆԱՏՕ-ի հովանու ներքո անցկացվեց Եվրոպական զինված ուժերում հոգեւոր առաջնորդների 22-րդ միջազգային ժողովը, որին մասնակցում էր Հայաստանի զինված ուժերի հոգեւոր առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը: Հայտնի է, որ նախորդ նմանատիպ ժողովը անցկացվել է Մադրիդում: Բացի եվրոպական երկրներից համաժողովին մասնակցել են նաեւ այլ պետությունների` ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա զինված ուժերի հոգեւոր սպասավորներ: Քննարկվել է հոգեւոր սպասավորներ-բանակի հրամանատարություն հարաբերությունների խնդիրը, բանակում հոգեւորականի իբրեւ հոգեբանի դերակատարության հնարավորությունը եւ այլ հարցեր: Համաժողովի մասնակիցները ծանոթացել են նաեւ Հայաստանի զորամասերում հոգեւոր առաջնորդության եւ հոգեւոր ծառայության փորձին: Մանրամասները` «Օրեր» եվրոպական ամսագրի առաջիկա համարում:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ
Պրահա

ՄՈՆՐԵԱԼ

# Գնահատանքի խոսքեր` ուղղված դոկտ. Արշավիր Գյոնջյանին



**ՀԲԸՄ-ի կենտրոնական գրասենյակից, ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հունվարի 8-ի համարի լրատվության, տեղեկացնում են, որ համաձայն կանոնադրության մոնրեալաբնակ ազգային-հասարակական գործիչ դոկտ. Արշավիր Գյոնջյանը ավելի քան 35 տարիներ շարունակ ՀԲԸՄ-ի տնօրենների կենտրոնական վարչությանը անդամակցելուց եւ վերջին տարիներին որպես փոխնախագահի պաշտոնավարելուց հետո թոշակի է անցել, տեղը զիջելով որպես փոխնախագահի Հարավային Կալիֆոռնիայի ամերիկահայ համայնքի անդամներից Սինան Սինանյանին, իսկ որպես տնօրենների կենտրոնական վարչության անդամ` նյույորքաբնակ Ջոզեֆ Ուղուրլյանին, որը հիմնադիրներից է եւ գործադիր տնօրենը «Amber Capital» ներդրումային ընկերության:**

**Անցյալ հոկտեմբերին, ՀԲԸՄ-ի Բուենոս Այրեսում կայացած 86-րդ ընդհանուր ժողովի ընթացքում, կազմակերպության նախագահ Պերճ Սեդրակյանը բարձր է գնահատել դոկտ. Գյոնջյանի երկարամյա, նվիրյալ աշխատանքը ընդհանրապես կանադահայ համայնքում եւ մասնավորապես ՀԲԸՄ-ի ծրագրերի իրականացման գործում: Նա շեշտել է հատկապես ՀԲԸՄ-ի Ալեք Մանուկյան ամենօրյա դպրոցի, «Ապագայ» թերթի եւ Թեքեյան մշակութային միության հիմնադրման աշխատանքները, որոնց կազմակերպմանը եւ իրականացմանը անձնվիրաբար մասնակցել կամ ղեկավարել է դոկտ. Արշավիր Գյոնջյանը: Պրն Սեդրակյանը հատուկ ակնածանքով նշել է նաեւ նրա կողակցի` տիկին Նադիայի անունը, որը միշտ թիկունք է կանգնել իր ամուսնուն եւ օժանդակել` իրագործելու ծրագրերը:** Հ. Ծ.

# Արամ Համբարյան. Ամերիկահայերը եւս մեկ անգամ հիասթափվեցին Օբամայից

**ԱՄՆ հայկական համայնքը շարունակելու է իր դժգոհությունն ու անհամաձայնությունն արտահայտել Ադրբեջանում Միացյալ Նահանգների դեսպանի պաշտոնում ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահ Մեթյու Բրայզայի նշանակման առնչությամբ: Վերջինս բավականին վաղուց հավաքած ճամպրուկը վերջապես վերցրել ու արդեն փետրվարի 6-ին ժամանել է Ադրբեջան:**

**«The Washington Times»-ի կիրակնօրյա հրապարակման համաձայն, Ամերիկայի հայդատի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը վստահեցնում է, որ Բրայզան ոչ օբյեկտիվ վերաբերմունք ունի Ադրբեջանի հանդեպ: «Հայերը եւս մեկ անգամ հիասթափվեցին նախագահ Օբամայից, որ հայ համայնքին տված իր ոչ մի խոստումը չկատարեց», ասել է Համբարյանը:**

**Չնայած Օբամայի կուսակցությունը ներկայացնող որոշ սենատորներ դեմ էին Բրայզայի թեկնածությանը, Օբաման, ըստ Համբարյանի, այդուամենայնիվ, նրան Ադրբեջանում դեսպան նշանակեց: Օբաման, չկարողանալով հաղթահարել Բրայզայի թեկնածության առնչությամբ սենատորներ Բոքսերի եւ Մենենդեսի կիրառած վետոները, հարցը որոշեց, երբ ամերիկյան օրենսդիր մարմինն արձակուրդում էր, ինչն էլ հնարավորություն է տալիս ԱՄՆ նախագահին դեսպանների նշանակման հարցում որոշումներ կայացնել առանց Սենատի: Բրայզայի հետ նույն «ճակատագրին» էր արժանացել նաեւ Թուրքիայում ԱՄՆ դեսպանի թեկնածուն:**

**Այդ ամենով հանդերձ, եւ չնայած Բրայզան արդեն ժամանել է Բաքու, նրա թեկնածության հաստատման հարցը դեռ փակված չէ: Համբարյանը հույս է հայտնել, թե Բրայզայի թեկնածության դեմ արտահայտված սենատորները կպահպանեն իրենց դիրքորոշումը եւ արդեն այս տարի` Կոնգրեսի հաջորդ նստաշրջանում չեն հաստատի նրա թեկնածությունը, եւ Բրայզան ստիպված կլինի թողնել դեսպանի պաշտոնը Բաքվում: Սպիտակ տունն, իր հերթին, չսպասելով Կոնգրեսի հերթական նիստին, արդեն իսկ Բրայզայի թեկնածությունը նորից ներկայացրել է հաստատման:**

**Թե ինչպես կվերաբերվեն դեսպանի թեկնածության հաստատմանը կոնգրեսականները, դեռեւս կպարզվի: Սակայն հանգամանքը, որ հարեւան «ոչ բարյացակամ» երկրում Միացյալ Նահանգները կարող է ներկայացնել Մեթյու Բրայզան իր ադրբեջանամետ հայացքներով ու դիրքորոշմամբ, բնավ էլ ի նպաստ տարածաշրջանային խաղաղության կամ կայունության չէ, որ վկայում է:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հովիկ Աբրահամյանը վստահ է, որ ՀՀԿ-ն է 50+1 տոկոս հավաքելու

*1-ին էջից*

Լրագրողները հետաքրքրվեցին, թե ի՞նչ է մտածում ԱԺ նախագահը երկպալատ խորհրդարանի` շրջանառության դրված գաղափարի վերաբերյալ: Ըստ Հ. Աբրահամյանի` խնդիրը դեռ պետք է քննարկվի, սաղմնային վիճակում է, իրագործելու համար էլ սահմանադրական փոփոխություններ պետք է կատարվեն, իսկ առայժմ Հայաստանի առջեւ առավել հրատապ եւ լուծման կարոտ հարցեր կան: Իր քաղաքական ապագայի վերաբերյալ հարցին ի պատասխան էլ ասաց. «Ես իմ դիրքորոշումը կամ քաղաքական հայացքները չեմ փոխում, ես մեկ դիրքորոշում ունեմ, որը շատ հստակ է», ասաց նա` տեսողության պրոբլեմ ունեցողներին հորդորելով դիմել բժշկի: Ի դեպ, երեկ, ԱԺ օրակարգը հաստատելիս, երբ «Ժառանգությունից» Արմեն Մարտիրոսյանն ու Լարիսա Ալավերդյանը, նկատել տալով, որ հայ-թուրքական արձանագրությունների տակ մեր ստորագրության պահպանման պարագայում Թուրքիան շարունակում է Հայաստանի այս նախաձեռնությունից օգուտ քաղել, արդյո՞ք ժամանակը չէ, որ Հայաստանը հստակեցնի իր դիրքորոշումը եւ հետ վերցնի իր ստորագրությունը հայ-թուրքական արձանագրությունների տակից, Հ. Աբրահամյանը պատասխանեց, որ իր դիրքորոշումը հայտնի է, մի քանի անգամ արտահայտել է, ու հիմա էլ իր կարծիքը չի փոխել, իսկ Թուրքիայի այդ կեցվածքն անբարոյականություն է:

ԱԺ պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի պահվածքին անդրադառնալով (հայհոյել էր «Հետքի» լրագրողին)` ԱԺ նախագահը նկատեց, թե յուրաքանչյուր պատգամավոր (եւ յուրաքանչյուր քաղաքացի) այլ քաղաքացիների հետ կոռեկտ պետք է շփվի, իսկ միջադեպի առիթով քրեական գործ է հարուցվել` պետք է սպասել վճռին:

Երեկ, ի դեպ, ԱԺ նախագահը հայտնեց, որ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը հրաժարական է ներկայացրել, եւ եթե երեք օրվա ընթացքում ՄԻՊ-ն իր գրավոր դիմումը հետ չվերցնի, այն կհամարվի ընդունված, ինչի մասին ԱԺ նախագահը կհայտարարի հինգշաբթի: Ամենայն հավանականությամբ` հենց այդպես էլ կլինի, եւ հավանաբար արդեն հաջորդ քառօրյայում մենք նոր ՄԻՊ կունենանք: Էլի ի դեպ` երեկ խորհրդարանում լրագրողների ճշտող փորձերը, թե նոր ՄԻՊ-ի թեկնածության հարցում ՀՅԴ-ն կողմնորոշվե՞լ է, արդյունք չտվեցին, քանի որ ՀՅԴ-ական պատգամավորները անուններ չէին ուզում տալ` նկատելով, որ կուսակցությունում այդ հարցը դեռ չի քննարկվել: Ասենք, որ արդեն եղածների կողքին պաշտոնի թեկնածուների նոր անուններ էլ էին շրջանառվում` օրինակ` «Հանրապետություն» կուսակցությունից իրավապաշտպան Արտակ Զեյնալյանի, արդարադատության խորհրդում ԱԺ ներկայացուցիչ Գրիգոր Բադիրյանի անունները: Իսկ հանրապետականների ակնարկներից հասկացանք, որ առավել հավանական է համարվում ավելի վաղ շրջանառվող Կարեն Անդրեասյանի թեկնածությունը:

Երեկ մի շշուկ էլ կար, որ այսօր ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանն ինչ-որ հայտարարություն է անելու: Համենայն դեպս` հենց ԱԺ նախագահը լրագրողների հետ զրույցում նշեց, թե անցած նախագահական ընտրություններին ԲՀԿ-ն սատարեց Սերժ Սարգսյանին եւ կարծիք հայտնեց, որ մոտ ժամանակներս ԲՀԿ-ն կրկին կհայտարարի Ս. Սարգսյանին սատարելու մտադրության մասին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հակառակ դեպքում «կամ ինքը կմեռնի, կամ կինը»

Պաշտոնական Բաքուն, փաստացի նենգադուլի ենթարկելով ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացը, քարոզչական ճակատում կարծես ողեգրում է նոր մարտավարություն: Ասվածի վկայություն է Իլհամ Ալիեւին առընթեր ռազմավարական հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն **Գյուլշան Փաշաեւայի** հարցազրույցը գերազանցապես իշխանության խոսափող հանդիսացող 1news.az-ին, որտեղ արծարծվում է «Ալանդյան մոդելը ԼՂ-ում կիրառելու» խնդիրը: Ըստ Փաշաեւայի, ««ալանդյան» թեման միշտ եղել է Հարավային Կովկասի երկրների պետական կառույցների, փորձագիտական հանրության եւ հասարակայնության ուշադրության կենտրոնում»:

Որտեղի՞ց է գալիս այս հավակնոտ պնդումը, քանի որ մասնավորապես ղարաբաղյան կարգավորման շուրջ որոնումներում միայն մեկ անգամ, այն էլ՝ շատ անհաջող է քննարկվել «ալանդյան մոդելը», կարելի է թողնել հայտարարության հեղինակի խղճին, բայց նա ճիշտ է, երբ գտնում է, որ «չնայած դրան, «ալանդյան մոդելի» գործնական կիրառումը դեռեւս ենթարկվում է կասկածանքի»: Ըստ էության, Փաշաեւայի հետագա դատողություններն այն մասին, որ «ալանդյան մոդելի» այն առանձնահատկությունների, որպիսիք են «անվտանգության միջազգային երաշխիքները, կղզիների բնակչության ազգային ինքնության պահպանման համար պայմանների ստեղծումը, շվեդ փոքրամասնության՝ Ֆինլանդիայի տարածքային ամբողջականության շրջանակներում ինքնորոշման իրավունքի իրացումը, ավելի մանրամասն ուսումնասիրությունը ղարաբաղյան կարգավորման դեպքում կարող են օգտակար լինել», սոսկ տեսական մտավարժանքներ են:

Բանն այն է, որ ղարաբաղյան կարգավորման ներկա հայեցակարգը չի ենթադրում Արցախի ժողովրդի՝ «Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում ինքնորոշման իրավունքի իրացում», ինչպես կարծում են Ադրբեջանում: Երբ Ազգերի լիգան որոշում էր Ալանդյան կղզիների՝ մեծ մասամբ շվեդաբնակ տարածքի հարցը, խնդիրը դիտվում էր իբրեւ Շվեդիայի եւ Ֆինլանդիայի միջեւ ակնհայտ տարածքային վեճ: Այդ իսկ պատճառով էլ ընտրվել է «ոսկե միջինը»՝ կղզիները մտցվել են Ֆինլանդիայի կազմ, բայց շվեդ փոքրամասնությունն ստացել է ինքնակառավարման ամենալայն իրավունքներ:

Ղարաբաղյան կարգավորման հայեցակարգն ի սկզբանե ակնարկ իսկ չի պարունակել եւ չունի, որ խնդիրն Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ «տարածքային վեճ է»: Այդպես ներկայացնում է միայն ադրբեջանական կողմը: Միջազգային միջնորդությունը, սակայն, հարցը դիտել եւ շարունակում է դիտել ինքնորոշման իրավունքի իրացման կտրվածքով: Հակառակ պարագայում ՄԱԿ-ը կկայացներ պարտադրող որոշում՝ Ալանդների կամ աշխարհում գոյություն ունեցող այլ նախադեպերի օրինակով կամ այլ՝ «տարածքային ամբողջականությունն անվերապահորեն վերականգնելու հիմնով»:

Պաշտոնական Բաքուն ահռելի ջանքեր է գործադրում, որպեսզի հարցը հեռացնի սեփական պատասխանատվության տիրույթից: Մինչդեռ բոլոր չարիքների աղբյուրը 1991 թ. հոկտեմբերի 18-ին ընդունված՝ Ադրբեջանի «Պետական անկախության մասին» սահմանադրական ակտն է, որը հակասում է միջազգային իրավունքին: Խոսքն այն մասին է, որ անիրավական է հավակնել նախկին Ադր. ԽՍՀ ողջ տարածքին, եթե չեն պահպանվում այդ տարածքի կազմավորման համար հիմք հանդիսացած սկզբունքները:

Այլ առիթներով կարելի է փաստարկել, որ Ադրբեջանը կոպտորեն խախտել է նաեւ Նախիջեւանի ինքնավարության իրավունքները, որը ԽՍՀՄ պետական կառուցվածքում օժտված էր ավելի մեծ լիազորություններով, քան ունի այսօր: Այսօր բավարարվենք նրանով, որ Ադր. ԽՍՀ տարածքը հռչակագրելով որպես անկախություն հռչակած հանրապետության ինքնիշխանության տիրույթ, պաշտոնական Բաքուն միակողմանիորեն դենոնսացիա է ենթարկել ԼՂ ինքնավարությունը: Այդ ակտը միջազգային իրավունքի տեսանկյունից ուժ չունի: Եվ այդ է պատճառը, որ ղարաբաղյան կարգավորման՝ միջնորդների կողմից նույնիսկ Լիսաբոնի գագաթաժողովից հետո մշակված առաջարկություններում հատուկ ընդգծվում է «համաձայնություններն Ադրբեջանի սահմանադրության մեջ ինկորպորացիայի ենթարկելու» հստակ առաջարկությունը:

Սա Ադրբեջանի սահմանադրությունը միջազգային իրավունքին հակասող ճանաչելու պարզորոշ շեշտադրում է: Թերեւս՝ պահանջ, որպեսզի պաշտոնական Բաքուն սեփական նախաձեռնությամբ հաղթահարի այն:

Մենք առիթ ունեցել ենք ասելու, որ Իլհամ Ալիեւը սահմանադրությամբ ԼՂ-ին «ինքնավարություն շնորհելու» լիազորությամբ օժտված չէ, եւ այդ հարցի վերաբերյալ ձեռք բերված որեւէ պայմանավորվածություն, ինչին իբր թե ձգտում է նա, իրավական ուժ չի ունենալու: Այս իրողությունն առկա է ղարաբաղյան կարգավորման ներկա հայեցակարգի հիմքում: Միջնորդներն էապես տրանսֆորմացիայի են ենթարկել իրենց մոտեցումը՝ ԼՂ վերջնական կարգավիճակի որոշարկման հարցը «կողմերի միջեւ ձեռք բերվելիք եւ Ադրբեջանի սահմանադրության մեջ ինկորպորացիայի ենթարկվելու» հարթությունից այն տեղափոխելով միջազգային իրավունքի տիրույթ եւ նշելով «իրավական ուժ ունեցող կամարտահայտությունը» որպես ինքնորոշման իրավունքի իրացման մեխանիզմ:

«Կամարտահայտությունը» չի ենթադրում նախ պայմանագիր, ապա՝ ինկորպորացիա, այլ՝ որ դա պետք է ուղղակի, անմիջական, պարտադիր ուժ ունենա բոլորի, այդ թվում եւ միջազգային հանրության համար:

Կոպիտ ասած, Ադրբեջանն ունեցել է սեփական «տարածքային ամբողջականությունը նախկին Ադր. ԽՍՀ սահմաններում վերականգնելու» հնարավորություն, բայց չի իրացրել՝ ոտնահարելով ինքնորոշման իրավունքը: Եվ այժմ միջազգային հանրությունը փորձում է ԼՂ ժողովրդի համար ստեղծել ինքնորոշման իրավունքի իրացման լիովին լեգիտիմ հնարավորություն:

Սա իրոք փակուղի է, որից կա ելքի երկու հնարավորություն. կամ Ադրբեջանն «օգտագործում է տարածքային ամբողջականության վերականգնման իրավունքը», կամ նպատակաուղղվում իրավական ուժ ունեցող կամարտահայտության հեռանկարին:

Առաջին հնարավորությունն օգտագործելուց Իլհամ Ալիեւը ձեռնպահ է մնում: Դա, իհարկե, ներկայացվում է իբրեւ «բացառիկ պացիֆիզմ եւ կառուցողականություն», սակայն նա ինքն էլ գերազանց հասկանում է, որ դա մարտահրավեր է ոչ այնքան ԼՂ-ին եւ Հայաստանին, որքան՝ միջազգային հանրությանը, որի պատասխանը կլինի համարժեք՝ ԼՂՀ փաստացի անկախության առնվազը մասնակի լեգիտիմացում: Երկրորդը նույնպես դրան է տանում: Երկու դեպքում էլ ԼՂՀ անկախությունը միջազգայնանում է:

Այս իրավիճակում Իլհամ Ալիեւը հիշեցնում է արեւելյան առակի ծերունուն, որ մտատանջվում է. «Ձեռքիս մի թռչուն կա, ասված ասում է՝ պահես՝ կինդ կմեռնի, բաց թողնես՝ դու: Հիմա ես ի՞նչ անեմ»:

Ուստի Գյուլշան Փաշաեւային Ալանդներ գործուղելու փոխարեն նա ավելի խելոք կգտնվի, եթե փորձի հասկանալ սույն առակի իմաստը. «Իսկ ինչո՞ւ բռնես ազատ թռչունը»: Լուծումն այստեղ է: Հակառակ դեպքում «կամ ինքը կմեռնի, կամ կինը»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Դերսիմի գյուղերի 75 տոկոսը հայաբնակ է

**Թուրքիայի Դերսիմի հայերի միությունը հիմնադրվել է 3 ամիս առաջ: Միությանն անդամակցում է շուրջ 80 մարդ: Նրանք հիմնականում կրոնական եւ ազգային ամրատներին վերադարձած հայերն են: Միության ստեղծման նպատակը հայապահպանությունն է, աշխարհի եւ Դերսիմի հայերի կապերի ամրապնդումը:**

**Միության նախագահ Միհրան Գյուլթեքինի մեկնաբանությամբ՝ Դերսիմում բնակվող գրեթե բոլոր ընտանիքներում հնարավոր է հայկական արմատներ գտնել: Իր հայ լինելու մասին Գյուլթեքինն իմացել է 7 տարեկանում, քրիստոնեական հավատքի վերադարձել 50-ում: «Ընտանիքիս անդամների մի մասը հորդորում էր չդիմել դատարան ու չվերականգնել ինքնությունը, սակայն մյուս մասը սատարեց եւ դատական երկար գործընթացներից հետո հասա նպատակիս», «Ուրբաթ» ակումբում ասաց Գյուլթեքինը:**



**Դերսիմի գյուղական համայնքների 75 տոկոսը հայեր են, սակայն նրանք քաջություն չունեն այդ մասին հայտարարելու: Նա փաստում է, որ իսլամական ավանդույթների խորացման ֆոնի վրա, Թուրքիայի վարչապետի խոսքերով ասած, հայ կոչվելը հայհոյանքի նման մի բան է: Թեպետ իշխանություններն առանձնապես ճնշում չեն գործադրում ինքնության վերադարձած հայերի նկատմամբ, սակայն Դերսիմի հայերին հետապնդում են անցյալի հիշողություններն ու վտանգը, որ կրկին հայերի դեմ կոտորածներ կսկսվեն: Թուրքիայում ապրող դավանափոխ հայերին ընդունում են որպես մահմեդականի: Նա հավելում է, որ Դերսիմի հայերի հարաբերությունները ստամբուլահայ համայնքի հետ այնքան էլ ջերմ ու բարեկամական չեն, որովհետեւ կա պատնեշ, հոգեբանական ճնշում, ինչի արդյունքում Դերսիմի հայերը մեկուսացված են:**

**Արդեն 5 տարի օգոստոս ամսին Դերսիմում մշակութային փառատոն է անցկացվում: Գյուլթեքինը հայ երիտասարդներին հրավիրում է մասնակցելու մշակութային այդ իրադարձությանն ու հավելում, որ դա կօգնի հոգեւոր կապի հաստատմանը:**

Հ. Հ.




# Ս. Սարգիսի տոնին ընդառաջ

**Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի տնօրինությամբ երիտասարդների արագահաս բարեխոս Ս. Սարգսի տոնի առիթով կազմակերպվում են տարբեր բարեսիրական ձեռնարկներ:**

**Այս շրջանակներում փետրվարի 8-ին՝ ժ. 14.00-ին, այցելություն կիրականացվի Նիկողայոս Տիգրանյանի անվան Երեւանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N14 հատուկ դպրոց: Գլխավորությամբ «Արարատ» միության հոգեւոր հովիվ Տ. Հակոբ քահանա Խաչատրյանի, մասնակցությամբ միության անդամների եւ համանուն երգչախմբի՝ կկատարվի տնօրհնեքի արարողություն, կբաժանվեն նվերներ: «Արարատ» երգչախումբը համերգային ծրագրով կներկայանա: Բնության պահպանության թանգարանում Սիմոնյան Ռիմայի քաղցրավենիք-չրերի անհատական ցուցահանդեսում ներկայացված հավաքածուն կնվիրաբերվի երեխաներին:**

**Հասցե՝ Մամիկոնյանց 31:**

Արարատյան հայրապետական թեմի մամլո դիվան

# Վաղ թե ուշ «խոզագրիպը» կներթափանցի Հայաստան

**Մինչ Օքսֆորդի գիտնականները գրիպի բոլոր հայտնի ձեւերի դեմ առաջին անգամ պատվաստանյութ են ստեղծում, Վրաստանում ու Ռուսաստանում մոլեգնում է «խոզագրիպը»: Պատվաստանյութի մասին տեղեկացնում է Լոնդոնի «Գարդիան» թերթը: Պատվաստանյութն արդեն կլինիկական փորձարկումներ է անցել ու ցույց տվել իր արդյունավետությունը: Թե ե՞րբ պատվաստանյութը Հայաստան կհասնի, հայտնի չէ, սակայն մեր երկրի դեղատներում եւ բուժհաստատություններում կան անհրաժեշտ քանակությամբ դեղամիջոցներ AH1N1 վարակը կամ, ինչպես ժողովուրդն է ասում, «խոզագրիպը» բուժելու համար: Հայաստանի գլխավոր վարակաբան Արա Ասոյանը news.am-ին ասել է, որ Հայաստանում առայժմ AH1N1 վարակով հիվանդանալու դեպքեր չեն արձանագրվել: Արա Ասոյանը չի բացառել հարեւան Վրաստանից վարակի ներթափանցման հնարավորությունը. «Ինչպիսի կանխարգելիչ միջոցառումներ էլ ձեռնարկենք, դրանք չեն կարող կանխել հարեւան երկրից Հայաստան վարակի ներթափանցումը: Վաղ թե ուշ վարակը կներթափանցի մեր հանրապետության տարածք»:**

Ի. Պ.

# Սուխուդյանի գործը կարճվեց

**Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը Հայաստանում բարոյական փոխհատուցման ինստիտուտի բացակայության պատճառաբանությամբ կարճեց Մարիամ Սուխուդյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության: Հիշեցնենք, որ Նուբարաշենի թիվ 11 հատուկ դպրոցի գործի նախաքննության փուլում ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը հայտարարել էր, որ Սուխուդյանն անհիմն մեղադրանքով է հանդես գալիս, զրպարտել է անմեղ մարդկանց ու անչափահասներին դրդել պատժելի արարքների:**

**Սակայն Սուխուդյանը համոզված է, որ խախտվել է իր անմեղության կանխավարկածի իրավունքը եւ վճիռը բողոքարկելու է Վերաքննիչ դատարանում՝ պահանջելով բարոյական վնասի փոխհատուցում 1 մլն դրամի չափով:**

Հ. Հ.

# Ավտոկայանատեղերի գործարկումը բերել օրինական դաշտ

Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ **Տարոն Մարգարյանը** երեկ աշխատանքային խորհրդակցության ժամանակ անդրադարձել է հասարակական տրանսպորտի կանգառներում կարգ ու կանոն հաստատելու խնդրին: Նա հավելել է, որ պետք է բացառել տրանսպորտային միջոցների կուտակումները: Քաղաքապետարանը ճանապարհային ոստիկանության հետ համատեղ ուսումնասիրել ու ճանապարհային տեսախցիկներ տեղադրելու համար առանձնացրել է 15 ծանրաբեռնված խաչմերուկ:

Անդրադառնալով ավտոկայանատեղերի գույքագրման աշխատանքների ընթացքին, Մարգարյանը նշել է, որ զուգահեռ ուսումնասիրվում են դրանց տարողունակությունը, կայանող տրանսպորտային միջոցներից գանձվող գումարների ընդհանուր չափն ու իրավական հիմքը:

Փոխքաղաքապետը խիստ կարեւոր է համարել կայանատեղիների գործարկումը օրինական դաշտ բերելու փաստը:

«Այն ավտոկայանատեղիները, որոնք չունեն պայմանագրեր վարչական շրջանների հետ, արգելվելու են: Եթե կան ավտոկայանատեղիներ, ուրեմն պետք է լինեն պայմանագրեր», նշել է նա:

Հ. Հ.

## Շուկա

# Երբ նոր է հռչակվում վաղուց մերժվածը

### *ՀՀ-ում ֆերմերային կոոպերատիվներ ստեղծելու անկատար ծրագրերը նոր դրսեւորումներ են ցուցաբերում*





Ըստ շրջանառվող մի զրույցի՝ նախորդ տարեվերջին ՀՀ բարձրագույն իշխանությունը Հայաստան է հրավիրել համաշխարհային մեծության տնտեսագետների մի խմբի երկրի տնտեսության վերաբերյալ հերթական գնահատական ունենալու նպատակով: Մասնագետներից մեծ ջանք չի պահանջվել նկատելու, որ մեր տնտեսության ամենախոցելի տեղը գյուղոլորտն է, ուր ոչ միայն չի ստեղծվում ազգաբնակչությանն անհրաժեշտ պարենամթերքների նվազագույն քանակը, այլեւ աննշան քայլեր են արվում վերամշակման եւ արդյունաբերական գործունեության ծավալման ուղղությամբ: Նկատենք, որ ՀՀ հերթական գյուղնախարարի թեկնածության ընտրությունը ներկայացվեց որպես վերամշակմամբ զբաղվող կայացած գործարարի իրողություն: Թե ինչքանով է համոզեցուցիչ, հարկ է զուգահեռներ անցկացնել տեղում արտադրվող պահածոների ու արտերկրներից ներմուծվող նույնանուն արտադրատեսակների միջեւ: Վիետնամից կամ Հնդկաստանից բերված բանջարեղենի պահածոների գները գրեթե նույնն են, ինչ տեղում արտադրվածները, որը գնորդների տարակուսանքն է առաջացնում: Էլ ուր մնացին տրանսպորտային զգալի ծախսերի մասին ներմուծողների անհասկանալի փաստարկումները, որոնք բարձր գնագոյացման պարտադրված հիմնավորումներ են ներկայացվում: Պարզից էլ պարզ է, որ հազարավոր կիլոմետրեր հեռավորությունների համեմատ Երեւանի մերձակայքում գտնվող արտադրություններից վաճառակետեր հասցվածը պետք է զգալիորեն մատչելի լինի, որը մեզանում չենք նկատում: Այստեղ հարկ չենք համարում պնդել գերշահույթների ստացման մասին, քանզի հնարավոր է, որ մեզանում հումքը թանկ է: Այստեղ արդեն ծագում է նման արտադրության անհրաժեշտության հարցը. հենց օրերս սուպերմարկետներից մեկում վաճառվում էր «Հայկական» մակնշմամբ լիմոն, 1 կգ-ը 2400 դրամով, 1 հատի գինը՝ 400 դրամ, որպիսի գին ՀՀ-ում երբեւէ չի հանդիպել: Եվ հարցը, թե ինչո՞ւ է թանկ Հայաստանում արտադրված գյուղմթերքը, հնչում է ինքնաբերաբար. թանկ է մշակման ցածր արդյունավետության պատճառով, ահա եզրակացությունը:

Արդյոք այս վիճակի պատճառը հողի սեփականաշնորհումից հետո մեր գյուղացիական տնտեսությունների բաժին հասած հողերի մասնատվածությո՞ւնն է, որը մտահոգել է ՀՀ գյուղնախարարին եւ վճռականություն հաղորդել զբաղվելու գյուղացիական նոր տիպի տնտեսությունների կազմավորման ուղղությամբ, հանձին ֆերմերային կոոպերացիաների ստեղծման, հողերի խոշորացումը





դիտարկելով ՀՀ գյուղատնտեսության հուսադրող ապագա: Այս խնդիրը դրել են նախորդ բոլոր գյուղնախարարները, որոնցից յուրաքանչյուրը կարծես անտեղյակ է եղել նախորդի գործունեությանն ու սեփական մտահղացումները ներկայացրել է որպես անքննելի փաստարկ: Այնպես որ, եթե հերթական-հերթական նախարարը չգիտի այս մասին, լավ չէ, որի հաստատումն է նախարարափոխությունների շարանը: Մի փոքր անդրադարձ. իրոք հողազուրկ Ճապոնիայում հողը առավել է մասնատված, երկրի գյուղտնտեսությունների 60 տոկոսը հազիվ մինչեւ 1-ական հա ունի, 20 տոկոսը՝ 1-2 ական հա: Պարոն նախարարին խնդրենք հարցնել իր աշխատակազմին, թե ինչպես են ճապոնացիները կարողանում երկրի պահանջարկը բավարարող 10-12 մլն տոննա բրինձը արտադրել:

Թե ովքեր են մեզանում ՖԿ գործընթացի հեղինակները, ովքեր զորու են սեփականատեր դարձած հողի մշակին ու անասնապահին համոզել ինչ-որ միավորման մեջ մտնել, հայտնի չէ ընդհանրապես: Յուրաքանչյուր գործընթաց պետք է իր ջատագովներն ունենա, նրանք հանդես գան տպագիր ու էլեկտրոնային մամուլում, երկրում գործող մոտ 1000 գյուղական համայնքներից գոնե 1-2-ում նման միավորումների ստեղծմամբ ցուցադրեն դրանց արդյունավետությունը, մատչելի ձեւով մասսայականացնեն, որից հետո որեւէ մեկին համոզելու խնդիր չի ծագի: Բայց տարիներն անցնում են, երկրի պարենային ապահովության խնդիրը ահագնանում է, որի լուծման կախարդական գավազան հռչակվում է ՖԿ-ն: Հեր օրհնածներ, լավագույն գյուղոլորտ ունեցող եվրոպական գեթ մեկ երկրի օրինակ բերեք, ուր ձեր նախանշած ուղիով են կառավարվում: Ընդգծված անհատ դանիացի ու անգլիացի ֆերմերներն են 1 հա-ից ցորենի 7-8 տոննա բերք ստանում, անհատ ֆրանսիացի ու հոլանդացի անասնապահներն են 1 կովից տարեկան 8-10 հզ. լիտր կաթնատվություն ապահովում, մեր համապատասխանաբար 2-ական տոննաների համեմատ: Արդյունավետ գյուղատնտեսություն վարող հիշյալ ու բազում այլ երկրների ֆերմերների մտքով իսկ չի անցնի ամենօրյա աշխատանքների իրականացման նպատակով միավորումներ ստեղծել: Գյուղաբնակն աշխարհի որ մասում էլ լինի, այսօր ընդամենը մեկ հոգս ունի. իր սեփական հողից ապահովել բարձր վերարտադրություն, անասնատեսակներից՝ բարձր մթերատվություն: Բարի եղեք նրան այս ուղղությամբ առաջնորդել, առանձնացնելով ոլորտի հիմնախնդիրը, որն է՝ կենդանական ծագման սննդատեսակների արտադրության առաջնայնությունը: Յուրաքանչյուր այլ պահվածք Հայաստանը դարձնելու է այլոց բանջարաբոստանային կցորդը, չլուծելով երկրաբնակների անգամ նվազա-





գույն պահանջները: Նախորդ տարում խաղողի համախառն բարձր բերքի պարագայում հարյուրհազարավոր հայ ընտանիքների Ամանորի սեղաններին անգամ այս միրգը չհայտնվեց: Աշխարհի շատ ու շատ երկրներում տեղի գյուղարտադրանքը հանրությանը մատչելի գին է ունենում, որը չես ասի կգ-ը մոտ 3 դոլար գնահատվող հայկական խաղողի մասին: Այնպես որ 1 կգ-ը 130 դրամով մթերված խաղողը կոնյակագործների շահերի սպասարկմանը ծառայեց, որոնց արտադրանքից հայ հանրության բացարձակ մեծամասնությունը անկարող է օգտվել: Ներկայացվող նկարներում պատկերված են Լոս Անջելեսի տարբեր սուպերմարկետներում վաճառվող գյուղմթերքների գները. LBS-ով, որը կազմում է 454 գրամ, արտահայտված են մթերքների 3 եւ 10-ապատիկների 1 դոլար կազմող գները:

Մեզանում տեղական խնձոր գրեթե չկա, ներկրվածի 1 կգ-ը 5 դոլարի սահմանում է վաճառվում, արքայանարինջի հատը 150-200 դրամի է հասնում, 2-րդ հաց հռչակվող կարտոֆիլի կգ-ն արդեն 350 դրամ է, չխոսելով միս-մսամթերքների հայաստանցիների զգալի մասին անհասանելի գներից: Թեեւ մեր հայրենակիցներից շատերը հակված չեն ականջ դնելու շրջանառվող այլեւայլ զրույցների, կապված գյուղոլորտի պատասխանատուների իրական մտադրությունների հետ՝ գյուղացուն աղքատացնել եւ գնել նրա բաժին հողակտորը, այսուհանդերձ մեզանում ծավալվող գործընթացները այլ ենթադրության տեղ չեն թողնում: Բայց փաստ է նաեւ, որ այսօր Հայաստանում վաճառվում են անգամ տասնյակ հա-ներ ընդգրկող հողեր, այգիներ ու խոշոր անասնահամալիրներ: Ուրեմն այստեղ նույնպես գործերը բարեհաջող չեն: Փոխարենն ամեն ինչ է արվում հայերիս ոստանը անպտուղ ու անլիարժեք մի տարածք ներկայացնելու ուղղությամբ, երկիրը սակավահող է հայտարարվում, հողն՝ աղակալած, որին ի պատասխան ստանում ենք անձրեւ ու կարկուտ, երաշտ ու հողմեր:

ՀՀ-ն իր հողային, ջրային ու ջերմային կարողունակությամբ հրաշք տարածք է գյուղոլորտում էական արդյունքների հասնելու համար: Պարզապես պետք է առաջնորդվել գյուղատնտեսական գործունեության համաշխարհային զարգացումներում էական արդյունքներ երաշխավորած ձեռնարկումների իրագործմամբ, ոչ թե արդյունքներ չերաշխավորող ինչ-ինչ նախաձեռնությունների հռչակմամբ:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**
**2006-08 թթ. ՀՀ գյուղնախարարի խորհրդական**





# Ինչպիսի՞ն է եղել անշարժ գույքի շուկան 2010-ին

*1-ին էջից*

Մարզերում, բացառությամբ Երեւանի, 2010-ին վաճառվել են 4005 բնակարաններ, որոնց քանակը 2009-ի համեմատ աճել է 11 տոկոսով, իսկ միջին գներն էլ՝ 3 տոկոսով:

Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները 2010-ին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 179 հազար դրամ: Վաղարշապատում (Էջմիածնում)՝ 164 հազար դրամ է կազմել, Աբովյանում 1 քմ գինը՝ 145 հազար դրամ: Ապա գալիս են Իջեւանը՝ 136 հազար դրամ, Աշտարակը՝ 134 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 132 հազար դրամ, Գորիսը՝ 127 հազար դրամ, Մասիսը՝ 126 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:

2010-ին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 5174 գործարք, որից 1272-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2009-ի համեմատ աճել է 11,1 տոկոսով, իսկ մարզերում՝ 24,9 տոկոսով:

Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2010-ին 2009-ի համեմատ նվազել են 2,4 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | |
|---|---|---|
| | 2009թ. | 2010թ. |
| Կենտրոն | 491700 | 483700 |
| Արաբկիր | 388700 | 393100 |
| Քանաքեռ-Զեյթուն | 298300 | 293400 |
| Նորք-Մարաշ | 296500 | 284100 |
| Ավան | 257200 | 249100 |
| Էրեբունի | 270100 | 256900 |
| Շենգավիթ | 263000 | 259800 |
| Դավթաշեն | 287900 | 282700 |
| Աջափնյակ | 262600 | 247400 |
| Մալաթիա-Սեբաստիա | 253100 | 248000 |
| Նուբարաշեն | 154200 | 149100 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 293000 | 286100 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները 2010-ին 2009-ի համեմատ աճել են 2,8 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները դարձյալ Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 287 հազար դրամ: Երկրորդը Վաղարշապատն է, որտեղ 1 քմ-ը կազմել է 173 հազար դրամ, երրորդը Աբովյանն է՝ 1 քմ-ն 160 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը եւ Իջեւանը՝ 141 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 140 հազար դրամ, Գորիսը՝ 132 հազար դրամ, Եղվարդը՝ 128 հազար դրամ 1 քմ դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2010-ին 2009-ի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4,1 տոկոսով, աճուրդով վաճառքներինը նվազել 9,2 տոկոսով: Ընդ որում, Երեւանում աճել է 3 տոկոսով, իսկ մարզերում, միասին վերցրած, նվազել 9,4 տոկոսով:

2010-ին 2009-ի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 25,8 տոկոսով:

2010-ին իրականացվել են հիպոթեկային գրավադրման 1741 գործարքներ, որից 1279՝ Երեւանում: Հիպոթեկային գրավադրման գործարքներից 79,8 տոկոսն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 15 տոկոսը՝ անհատական բնակելի տների, մնացածը հասարակական նշանակության օբյեկտների, այգետնակների եւ հողերի նկատմամբ: 2010-ի մարտի համեմատ, հիպոթեկային գրավադրման գործարքների քանակն աճել է 15,5 տոկոսով, ընդ որում Երեւանում՝ 19,5 տոկոսով, իսկ մարզերում՝ 4,7 տոկոսով: 2009-ի համեմատ, հիպոթեկային գրավադրման գործարքների քանակն 2010-ին աճել է 68,9 տոկոսով, ընդ որում, Երեւանում՝ 63,6 տոկոսով, մարզերում՝ 85,5 տոկոսով:

Այսպիսով, 2010-ի տարեկան արդյունքները ցույց են տալիս, որ անշարժ գույքի շուկան վերականգնվում է 2009-ի ճգնաժամի հարվածից հետո: Սակայն, կադաստրի կողմից անցած տարվա վերջին ամիսների՝ հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, ցուցանիշների ամսական կտրվածքով վերլուծության բացակայությունը հնարավորություն չի տալիս պարզելու, թե այս պահին ի՞նչ միտումներ են գրանցվում այստեղ:

# Հայ թեկնածուներ՝ թուրքական կուսակցությունների ցուցակներում

Թուրքիայում հունիսին կայանալիք խորհրդարանական ընտրություններում, որոնց համատեքստում էլ դիտարկվում են շատ գործընթացներ հարեւան երկրում, թուրքական կուսակցությունների ընտրական ցուցակներում հայ համայնքի ներկայացուցիչներ են ընդգրկվել:

Ըստ թուրքական «Hurriyet Daily News» պարբերականի, հունիսյան ընտրություններին ստամբուլահայ համայնքից որպես թեկնածու տարբեր կուսակցությունների ցուցակներով կմասնակցեն 6-ը, եւ մեկը՝ որպես անկախ թեկնածու:

Առաջադրված հայ թեկնածուներից մեկի՝ Արեւ Ջեբեջիի խոսքերով, որ ներկայացնելու է գլխավոր ընդդիմադիր՝ Ժողովրդահանրապետական կուսակցությունը, հայ թեկնածուների բացակայության վերջին 50 տարիների «ավանդույթը» փոխվել է «Ակօս» թերթի խմբագիր Հրանտ Դինքի սպանությունից հետո:

Դինքի սպանությունն, ըստ Ջեբեջիի, միանշանակ ազդեցություն չի ունեցել հայերի վրա, քանի որ հայ համայնքի ներկայացուցիչների մի մասը մտավախություն ունի, թե կարող է սպանվել իր արտահայտությունների համար: Սակայն գալիք ընտրություններին մասնակցություն ունենալու հեռանկար ունեցող հայերի նման մտածողները քիչ չեն, որոնք նախընտրում են բարձրաձայն պաշտպանել իրենց իրավունքները:

Վերջին 50 տարիներին այս ընտրություններն առաջինը կլինեն, երբ Թուրքիայի հայկական համայնքը կարող է ներկայացուցիչ ունենալ օրենսդիր մարմնում: Ջեբեջին ներկայացրել է, թե նախկինում հայերն իրենք էին խուսափում Թուրքիայի ներքին քաղաքականությանը մասնակից դառնալուց՝ «համաստեղ անցյալի ցավոտ իրադարձությունների առումով»:

Ջեբեջին վստահեցրել է, որ Թուրքիայի խորհրդարանում հայտնվելու դեպքում բարձրացնելու է հայ համայնքի խնդիրները, միեւնույն ժամանակ, ներկայացնելով ողջ Թուրքիայի հասարակությունը: Հայ թեկնածուի վկայությամբ՝ հայ համայնքի ներկայացուցիչները շատ դեպքերում անտեղյակ են իրենց իրավունքներից, վախով, որ «նոր խնդիրներ չավելանան եղածներին»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Թուրքիան շուտով կարթնանա եկեղեցու զանգերի ղողանջներով, որովհետեւ Էրդողանի կառավարությունը մզկիթը եկեղեցու է վերածում»

**Այդ մասին, ինչպես երեկ նշել են թուքական կայքերը, հայտարարել է «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր Համիթ Հոմրիշը: Նրա՝ երկրի ոչ թուրքերի նկատմամբ ընդգծված ատելություն արտահայտող հայտարարության համար առիթ է ծառայել երբեմնի բյուզանդական Նիկեայի՝ Իզնիքի «Այա Սոֆիա մզկիթը» վերստին եկեղեցի դարձնելու մշակույթի նախարարության նախաձեռնությունը:**

**Հոմրիշը դրա առնչությամբ գրավոր հարցապնդում է արել Թուրքիայի ազգային մեծ ժողովում, նշելով. «Մշակույթի նախարարության 20 հոկտեմբերի, 2010 թվակիր կարգադրությամբ եկեղեցու է վերածվել Իզնիքի «Այա Սոֆիա մզկիթը», քաղաքի վերաբերյալ նախարարության պատրաստած 22-էջանոց գրքույկում մզկիթը պատկերված է գմբեթի վրա տեղադրված Քրիստոսի քանդակով եւ խաչով, ինչը խիստ վշտացրել է Բուրսա նահանգի ողջ բնակչությանը:**

**Միաժամանակ նա, դիմելով պետնախարար Չելիքին, հարցրել է. «Որո՞նք են ձեր կառավարության մզկիթը եկեղեցու վերածելու դրդապատճառները, ինչի՞ հիման վրա է մշակույթի նախարարությունը նախաստեսել «Այա Սոֆիայի մզկիթն» անվանել Այա Սոֆիա եկեղեցի: Դուք մտադիր չե՞ք վերանայել նախարարության այս սխալ որոշումը»:**

**Պատգամավորին հուզել է այն փաստը, որ վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանության տարիներին ժամերգության համար բացված եկեղեցիների թիվը Թուրքիայում հասել է 16-ի, Տրապիզոնի Հույն ուղղափառ եկեղեցու Սումելա վանքում պատարագը մատուցվել է հենց օգոստոսի 15-ին, որը քաղաքի թուրքական նվաճման օրն է, եւ վերջապես, «Թուքիային ցեղասպանության մեջ մեղադրող Հայաստանին սիրաշահելու համար» կառավարությունը պետբյուջեից 3 մլն լիրա է ծախսել, որպեսզի վերանորոգի Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին:**

Հ. Չ.

# Կիպրացի թուրք ցուցարարները հայհոյանքներով դասապարտել են Թուրքիային

*1-ին էջից*

Այս հանգամանքը խիստ զայրացրել է վարչապետ Էրդողանին, որ ցույցի առնչությամբ պարզաբանումներում շեշտը հենց դրոշի վրա է դրել: Նա, ինչպես երեկ նշել էր «Հյուրիեթը», ասել է. «Ցուցարարները Հարավային Կիպրոսի հունական հատվածի դրոշն են բարձրացնում: Նրանց ձեռքին թուրքական ոչ մի դրոշ չի եղել: Սա չի կարող «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» ժողովրդի մոտեցումը լինել, մեզ հայտնի որոշակի խմբավորման մոտեցումն է՝ Հարավային Կիպրոսի հետ համագործակցողների: Սրանք «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» ծավալած հաշտեցման գործընթացը ռմբահարող խմբավորումներ են:

Կարծում եմ, սրանց նկատմամբ անհրաժեշտ միջոցառումները կձեռնարկի հյուսիսային Կիպրոսի վարչակարգը: Մենք էլ կանենք այն, ինչ մեզանից է կախված: Չենք կարող հանդուրժել այդ ամենը: Քիչ առաջ մեր մտահոգությունները փոխանցեցի «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» նախագահին: Ասացի, որ նա պարտավոր է վերաբերմունք ցույց տալ, կան բոլոր ցուցարարների նկարահանումները: Նրանց նկատմամբ պետք է դատական գործ հարուցել: Ելնում եւ հակաթուրքական ցուցապաստառները ձեռքին Թուրքիային են հայհոյում: Չպետք է դա թույլ տալ: Մեզ ասաց. «Մենք գիտենք, թե ում հետ են գործակցում ցուցարարները»: Ես նրան պատասխանեցի. «Քանի որ գիտես, արա այն, ինչ անհրաժեշտ է»: Մենք Կիպրոսի համար կյանք ու արյուն ենք տվել: Հետեւաբար չենք կարող հանդուրժել Թուրքիայի դեմ ցուցաբերվող այս անփառունակ մոտեցումը»:

Ի դեպ, մինչ այդ «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» ինքնակոչ նախագահ Դերվիշ Էրօղլուն հեռախոսազրույց է ունեցել Էրդողանի հետ, որի ընթացքում ցույցի առնչությամբ մտքեր է փոխանակել: Նախորդ օրը, «Հյուրիեթի» վկայությամբ, նա հաղորդագրություն էր տարածել, ասելով, որ Թուրքիայում ցույցին դրսեւորվող հակազդեցություններում կան թյուր եւ սխալ ըմբռնումով պայմանավորված արտահայտություններ, որոնք վշտացրել են Կիպրոսում տասնյակ տարիներ ազգային ազատագրական պայքար մղող կիպրացի թուրքերին:

Թե ի՞նչ արտահայտությունների մասին է խոսքը, չգիտենք: Բայց որ Կիպրոսի հիմնահարցի կարգավորման թուրքական տարբերակն իրականում նպատակամղված է չկարգավորվածության ապահովմանը, որպեսզի հնարավոր լինի կղզու հյուսիսային հատվածը կցել Թուրքիային, գաղտնիք չէ: Հայտնի է նաեւ այն, որ ներկայումս Կիպրոսի թուրքական հատվածը մեծապես բնակեցված է Թուքիայից տեղափոխված վերաբնակներով, քանի որ կիպրացի թուրքերի զգալի զանգված դեռեւս 1974-ին թուրքական զորքերի կղզի ներխուժման օրերին տեղափոխվել էր Անգլիա:

# Թունիսում արգելվել է Բեն Ալիի կուսակցությունը

**Թունիսի ժամանակավոր կառավարությունն արգելել է մինչեւ հունվարյան հեղափոխությունը կառավարած «Սահմանադրական դեմոկրատական միավորում» (ՍԴՄ) կուսակցությունը, որի ղեկավարը տապալված նախագահ Բեն Ալին էր: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Ներքգործնախարար Ֆահրաս Ռայհին հայտարարել է, որ ՍԴՄ քաղաքական գործունեությունը դադարեցվում է, կուսակցության բոլոր գրասենյակները փակվելու են, իսկ դրա անդամների ժողովներն ու մյուս միջոցառումները չեղյալ են հայտարարվելու: Դա արվում է ազգի շահերից ելնելով եւ օրենքի խախտումներ թույլ չտալու նպատակով, պարզաբանել է նախարարը:**

**Ռայհիի խոսքերով, կառավարության խնդրանքով դատարանը շուտով որոշում կընդունի ՍԴՄ-ի լուծարման մասին:**

**Բողոքի զանգվածային ելույթներից հետո՝ հունվարի 14-ի երեկոյան նախագահ Բեն Ալին հրաժարական տվեց եւ լքեց երկիրը: Իշխանությունն անցավ ժամանակավոր կառավարությանը: Չնայած վարչակարգի տապալմանը՝ Բեն Ալիի հետ կապված մի շարք պաշտոնյաներ մնում են երկրի ղեկավարությունում: Շարունակվող ցույցերի մասնակիցները պահանջում են նրանց հրաժարականը: 2010 դեկտեմբերից տեղի ունեցող ցույցերի, ոստիկանության եւ ցուցարարների բախումների ընթացքում սպանվել է 219 մարդ:**

**Հունվարի 19-ին հայտնի դարձավ Թունիսում Բեն Ալիի երեք տասնյակ ազգականների ձերբակալության մասին: Ավելի ուշ Եվրոմիությունը սառեցրեց Բեն Ալիի եւ նրա կնոջ՝ Լեյլա Թրաբելսիի բանկային հաշիվները, իսկ Ֆրանսիայում առգրավվեց Բեն Ալիի օդանավը:**

ԵԳԻՊՏՈՍ

# Ցուցարարները դարձյալ պահանջում են Մուբարաքի հրաժարականը

## *Կստեղծվի սահմանադրական բարեփոխումների հանձնաժողով*

Կահիրեի կենտրոնում՝ Թահրիր հրապարակում շարունակվում են բողոքի զանգվածային ելույթները: Ցուցարարների գլխավոր պահանջը Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի հրաժարականն է: Գլխավոր ընդդիմադիր կազմակերպության՝ «Մուսուլման եղբայրների» ղեկավարները իշխանություններից պահանջել են կատարել ստանձնած բոլոր պարտավորությունները:

Ցույցերը չեն դադարում՝ չնայած կառավարության եւ ընդդիմադիր



շարժումների առաջնորդների միջեւ սկսված բանակցություններին: Ցուցարարները խոստանում են հրապարակից հեռանալ միայն Մուբարաքի հրաժարականից հետո: Այդ մասին հաղորդում է BBC-ն:

Փոխնախագահ Օմար Սուլեյմանը 6 ընդդիմադիր խմբավորումների (այդ թվում «Մուսուլման եղբայրների») ներկայացուցիչների հետ բանակցելուց հետո լրատվամիջոցներին հայտնել է, որ համաձայնություն է ձեռք բերվել սահմանադրական բարեփոխումների համար հանձնաժողովի ստեղծման առնչությամբ: Ընդդիմության ներկայացուցիչները, սակայն, ընդգծում են, որ իշխանությունների ձեռնարկած միջոցներն անբավարար են: «Մուսուլման եղբայրները» ուղղակի հայտարարել են, որ այսուհետեւ իրենք բանակցություններին կմասնակցեն միայն Մուբարաքի պաշտոնաթողությունից, խորհրդարանի ցրումից եւ բոլոր քաղբանտարկյալների արձակումից հետո:

Հիշյալ հանձնաժողովը պետք է քննարկի առաջարկվող սահմանադրական բարեփոխումները, որոնք սահմանափակում են նախագահական կառավարման ժամկետը եւ մեղմացնում են նախագահության թեկնածուների առաջադրման չափանիշները: Հանձնաժողովում կընդգրկվեն դատական համակարգի ներկայացուցիչներ եւ քաղաքական գործիչներ: Մարտի սկզբներին պետք է հրապարակվեն այդ հանձնաժողովի հանձնարարականները:

Սուլեյմանն ասել է, որ հակակառավարական ձեռնարկումների մասնակիցները դատական հետապնդման չեն ենթարկվի: Կառավարությունը չի խոչընդոտի մամուլի ազատությանը, չի միջամտի համացանցի աշխատանքին:

Հունվարի 25-ից շարունակվող ցույցերի, Մուբարաքի կողմնակիցների ու հակառակորդների բախումների ընթացքում սպանվել են 300, վիրավորվել՝ մոտ 5 հազար անձինք: Միայն զբոսաշրջիկների թվի կրճատման հետեւանքով երկրի օրական կորուստներն անցնում են 310 մլն դոլարից:

Կիրակի օրը հայտնի դարձավ, որ կառավարող Ազգային դեմոկրատական կուսակցության ղեկավարությունը հրաժարական է տվել: Սակայն Հոսնի Մուբարաքը մնացել է կուսակցապետի պաշտոնում:

# Ճապոնիայի վարչապետը ՌԴ-ից պահանջեց վերադարձնել Կուրիլները

## *Մեդվեդեւի այցը՝ «աններելի վիրավորանք»*

Ճապոնիայի վարչապետ Նաոտո Կանը ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի Կուրիլյան կղզիներ կատարած այցը (2010-ի նոյեմբեր) անվանել է «աններելի վիրավորանք»: Ֆրանսպրեսը մեջբերում է վարչապետի երեկվա ելույթի այն մասը, որ Ճապոնիան պատրաստ է Ռուսաստանի հետ բանակցել Կուրիլյան կղզիների պատկանելության հարցի շուրջը եւ ստորագրել հաշտության պայմանագիր:

Այս հայտարարություններն արվել են փետրվարի 7-ին, երբ Ճապոնիայում նշվում է Հյուսիսային տարածքների (այդ թվում Կուրիլների) օրը:

Տոկիոյում բազմամարդ հանրահավաքում ելույթ ունենալով, Նաոտո Կանը ՌԴ-ից պահանջել է վերադարձնել Իտուրուպ, Կունաշիր, Շիկոտան եւ Հաբոմայի կղզիները: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Բողոքի ցույցի մասնակիցները ՌԴ դեսպանատան շրջակայքում ցուցադրաբար պղծել են ռուսական դրոշը, վրան կարգախոսներ գրելով եւ շենքի մոտ՝ ասֆալտի վրա քարշ տալով: ՌԻԱ գործակալությունը նշում է, որ Տոկիոյում ՌԴ դեսպանատունը պաշտպանում էին հարյուրավոր ոստիկաններ:

Կուրիլյան կղզիների պատկանելության հարցը սրությամբ ծառացած է ռուս-ճապոնական հարաբերություններում: Ճապոնիայի կառավարությունն իր դիրքորոշումը հիմնավորում է 1855 թ. փետրվարի 7-ին ստորագրված Առեւտրի եւ սահմանների տրակտատով, իսկ Ռուսաստանը գտնում է, որ կղզիները ԽՍՀՄ-ին են անցել 2-րդ աշխարհամարտի արդյունքների համաձայն:

2010-ի նոյեմբերին ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւն այցելեց վիճելի կղզիներից մեկը: Այցը հարուցեց ճապոնացի պաշտոնական անձանց վրդովմունքը: Ճապոնիայի դեսպանը կարճ ժամանակով հետ կանչվեց Մոսկվայից: 2011-ի փետրվարի 4-ին կղզիներ այցելեց ՌԴ պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովը:

# Շերի հայկական դիմագիծը

***«Ինչ էլ ասեն Քիմ Քարդաշյանի եւ նրա մյուս քույրերի մասին, միեւնույնն է, ինձ համար Շերը եղել ու մնում է իմ «երազների աղջիկը», գրում է Թոմ Վարդապետյանը «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հունվարի 15-ի համարում: Նա հատկապես անդրադառնում է Շերի հայկականությանն առնչվող հատկանիշներին: Ստորեւ՝ թարգմանաբար այդ հոդվածը որոշ հապավումներով:***

Ուղղակի հմայված եմ նրա տաղանդով եւ գեղեցկությամբ: Նաեւ տոկունությամբ: Կարողանալ դիմանալ այսքան երկար ժամանակ Հոլիվուդի եւ Լաս Վեգասի նման վայրերում եւ 64 տարեկանում դեռեւս հարատեւել՝ հեշտ գործ չէ: Դա պահանջում է շպարվել, գրիմավորվել, բայց նաեւ առավել կրքոտությամբ ու նվիրումով մոտենալ կատարածդ աշխատանքին: Նա շարունակում է մնալ առաջնակարգ դերասանուհի, իսկական ամերիկահայ կուռք:

Այդ իսկ պատճառով ես նրա թեկնածությունն եմ պաշտպանելու «Օսկարի» առաջիկա մրցանակաբաշխության ժամանակ: Եթե «Ֆարս» («Բուռլեսկ») ֆիլմում նրա դերակատարությունը չառաջադրվի թեկնածուների թվում, ես դադարեցնելու եմ «Հոլիվուդ Մեգըզինի» իմ բաժանորդագրությունը եւ հետաքննություն եմ պահանջելու: Նրա դերակատարումը՝ որպես գիշերային ակումբի սեփականատիրուհու, ուղղակի ցնցող էր ու անթերի:

Նախապես հիացել էի նրա օսկարակիր «Լուսնոտը» ֆիլմով, նաեւ մյուս ֆիլմերով՝ «Իսթվիկի վհուկները», «Թեյ Մուսոլինիի հետ», «Դիմակ» եւ այլն: «Ֆարս» ֆիլմում նա նույնքան հմայիչ է: Ահա թե ինչ է գրում քննադատներից մեկը այդ մյուզիքլի մասին. «Աստղ դառնալը երկար փորձառության արդյունք է: Առանց Շերի «Բուռլեսկ» ֆիլմը հաջողության չէր հասնի»:

Նրա երաժշտական կարիերան նույնքան հարուստ է ու հրապուրիչ: Ցարդ վաճառել է ավելի քան հարյուր միլիոն ձայնասկավառակներ: Համերգային շրջագայությունները դեռեւս մեծ պահանջարկ ունեն: 1985-ին, երբ դեռ բարետես լրագրող էի եւ աշխատում է «Հեյվրհիլ գազեթի» խմբագրությունում, լուր ստացանք, որ Հարվարդ համալսարանում որպես «Տարվա լավագույն դերասանուհու» Շերին շնորհելու են «Hasty Pudding» մրցանակը: Անմիջապես խնդրեցի խմբագրին, որ ինձ գործուղի Քեմբրիջ՝ մեկնաբանելու իրադարձությունը, եւ նրա դեմքին տատանումներ տեսնելով, ավելացրի, որ «նա իմ ընկերներից մեկն է, ու անձնական կյանքի մանրամասնություններով մեր թերթը կկարողանա առաջ անցնել Բոստոնի բոլոր մյուս թերթերից»:

Իրականությունից շատ հեռու չէր իմ ասածը, քանի որ բոլոր հայերն էլ ինչ-որ տեղ իրար մոտիկ են, ազգակից, բարեկամ՝ էթնիկական առումով: Եվ իմ այդ առաջին հանդիպումը նրա հետ իսկական «բացահայտում» դարձավ:



Ինչպես միշտ՝ իր թովիչ արտաքինով, նա նստած էր «Մերսեդես» ավտոմեքենայի հետեւի նստարանին եւ ձեռքով թափահարում էր իրեն ճանապարհ դնող ամբոխին: Նա ինձ նկատեց, երբ տեղ հասանք, եւ ես նրա մամուլի ներկայացուցչից թույլտվություն խնդրեցի հանդիպել նրան:

«Ինչպե՞ս ես», հարցի նրան հայերեն:

Շերն ինձ ցնցեց իր գերազանց հայերենի իմացությամբ՝ հավանաբար հորից ստացած ժառանգությամբ: Ջոն Սարգիսյանը բեռնատարների վարող, թղթախաղերի մոլին դարձած եւ բանտում նստած անձնավորություն էր եղել, բոլորովին ոչ այն ծնողը, որը երիտասարդ աղջկան պետք է դաստիարակեր: Շուտով ուրիշ հայեր միացան մեզ, եւ Շերը ոչ մեկիս հուսախաբ չարեց հայկական մշակույթի եւ ժառանգության իր գիտելիքներով: Նկատելի էր հպարտությունը նրա դեմքի վրա: Մյուս լրագրողները՝ իմ մրցակիցները, նախանձում էին եւ հարցնում՝ «Այդ ի՞նչ լեզվով ես խոսում»: «Է՜, մտածեցի, եթե հայ լինեիք, ավելի խոր կհասկանայիք նրան»:

Թերթում իմ տպագրած նյութը հավասարը չուներ: Նրա հայկականությունը սահմաններ չունի: Նա հասնում է բոլորին, իր հայ ազգակիցներին: Եվ այսօր էլ բոլոր օտարներին, որպես ինքնատիպ հայի օրինակ, ես տալիս եմ Շերիլին Սարգիսյանի անունը:

**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

# Դաշտենցի 100-ամյակը՝ Նյու Յորքում

Նյու Յորքի Համազգային հայ կրթական եւ մշակութային միության եւ Մեծն Նյու Յորքի Թեքեյան մշակութային միության կազմակերպությամբ փետրվարի 20-ին տեղի Սրբոց Նահատակաց եկեղեցու Գալուստյան սրահում տեղի է ունենալու հոբելյանական հուշ-երեկո նվիրված մեծանուն գրող Խաչիկ Դաշտենցի ծննդյան 100-ամյակին, տեղեկացնում է օնլայն կայքը, հավելելով, որ այդ առթիվ Հայաստանից հատուկ հրավերով միջոցառմանը ներկա կգտնվի ՀՀ ժողովրդական դերասան Ազատ Գասպարյանը (ասմունք): Նրա հատուկ առոգանությամբ հնչած բանաստեղծություններից բացի գեղարվեստական ծրագրում տեղ կգտնեն նաեւ տեսաերիզի ցուցադրում՝ գրողի կյանքի եւ ստեղծագործությունների մասին, ինչպես նաեւ հուշ-զրույց հոբելյարի դստեր Անահիտ Դաշտենցի հետ: Կմասնակցի Սրբոց Նահատակաց ամենօրյա վարժարանի երգչախումբը:



**Հ. Ծ.**

# Դեսպան Շառլ Ազնավուրը հանդիպում է ունեցել Սեմրա հիմնադրամի ղեկավարների հետ



Փետրվարի 4-ին Շվեյցարիայում Հայաստանի դեսպան Շառլ Ազնավուրը հանդիպում ունեցավ Ժուրա Կանտոնի նահանգների խորհրդական (Conseiller aux Etats), Ժուրա Կանտոնի եւ Հանրապետության նախկին նախարար, Սեմրա (Semra) հիմնադրամի նախագահ Կլոդ Հեշի եւ նույն հիմնադրամի փոխնախագահ Ժան-Պիեռ Բեռնհարդի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Ժուրա Կանտոնի կողմից հիմնադրամի միջոցով Հայաստանում երեխաների աջակցության ծրագրերի ընթացքը, Կանտոնի առողջապահության, համագործակցության եւ կրթության ծառայությունների եւ Երեւանի մանկաբուժության կենտրոնի, ինչպես նաեւ Սեմրա հիմնադրամի եւ Երեւանի Արաբկիր բժշկական կենտրոնի միջեւ համագործակցության ուղղությունները: Հանդիպման ընթացքում դեսպան Ազնավուրը կարեւորեց Ժուրա Կանտոնի կողմից Հայաստանի երեխաներին ցուցաբերվող օժանդակության շարունակումը եւ ընդլայնումը:

Սեմրա հիմնադրամը ստեղծվել է 1988թ. երկրաշարժից հետո՝ դրսեւորելով Շվեյցարիայի համերաշխությունը հայ ժողովրդին եւ արդեն ավելի քան 20 տարի պարբերաբար ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Հայաստանում մանկական առողջապահական ծրագրերին:

***ԿԱՐԾԻՔ***

# ՓՐԿԵԱ՝ ՅԵՐԵՒԵԼԻ ԵՒ ՅԱՆԵՐԵՒՈՅԹ ԹՇՆԱՄՒՈՅՆ

Արմենիա, այսպես են օտարներն անվանում մեր երկիրն ու այսօրվա մեր հայրենիքը, այն մեկ անգամ չէ, որ հիշատակվում է Աստվածաշնչում. իրոք որ, գեղեցիկ էլ հնչում է:

Հավանաբար նաեւ արժեզրկման նպատակով այս անվանումով է դրկից հանրապետությունում ստեղծվել համացանցային կայք, որը բավական գրագետ հայերենով ներկայացնում է, թե առկա բնական պաշարների հաշվին ինչ «նվաճումների» է հասնում երկիրը, զարգացնում տնտեսությունն ու հզորացնում բանակը: Մի խոսքով, իրականացվում է ազերիամետ ու հայատյաց քարոզչություն եւ անմիջապես էլ տեսանելի է դառնում թշնամու իրական դեմքը...:

... Տե՛ր Աստված, փրկի՛ր մեզ տեսանելի թշնամուց:

Բնականաբար ոչ արժեզրկման հեռանկարով հայոց երկրի աստվածաշնչական անունն է կրում նաեւ մեր հեռուստաընկերություններից մեկը՝ տեխնիկապես լավագույնս զինվածը, չնայած, հեռարձակվող մայրենին այստեղ բավական հաճախ աղավաղվում է: Իսկ երբեմն այնտեղից նույնիսկ փորձ է արվում համոզել, որ ամբողջությամբ գրական խոսքն էլ մի բան չէ եւ պետք է գործածել գրագիտության ու անգրագիտության միջին թվաբանականը: Զարմանալի է, որ ալիքի կառավարմանը սերտորեն առնչակից ընտանիքի հայրը, լեզվաբանական հեռուստաշարի հեղինակ լեզվաբանը, այդպես էլ չի փորձում հակազդել նման երեւույթներին: Չնայած սա եւս կարող է իր բացատրությունն ունենալ. լեզվի մաքրության ջատագովի եւ քարոզչի դերը զբաղեցնելը նախկինում վատ գործ չէր, բայց ներկայիս շուկայական հարաբերությունները միանգամայն այլ հեռանկարներ են բացում: Իսկ ընդհանուր առմամբ, կարծում եմ, հեռուստաալիքի երկարուձիգ գովազդային հոլովակներն ընդմիջող հաղորդումները եւս իրենց բովանդակությամբ ոչնչով չեն նպաստում ազգային որեւէ խնդրի լուծմանը. քրեական, գողական, ապերոյական կերպարներ կամ անչափահասների կողմից սպառվող, մանկապղծության տարր պարունակող ձայնագրված, շինծու ծիծաղով ուղեկցվող սեռամետ տափակաբանություններ, եվրոպացի դառնալու տենչով սեփական խառնվածքից հրաժարվելու իզուր ճիգեր գործադրող եւ այդպիսով անհարմար դրության մեջ հայտնվող դերասանուհիներ ... Այս գործերում հեռուստաալիքը լիիրավ կարելի է Հայաստանում առաջատար համարել եւ հենց նա էլ հանդիսանում է ամենամեծ խոչընդոտը եթերի բարոյազրկումը կանխելու հասարակության (ասում են, երբեմն՝ նաեւ ղեկավար ամենավերին օղակների) նախաձեռնություններին: Այս հեռուստատեսության ամենաանվնաս եթերաժամերը, թերեւս, կարելի է համարել նույն գովազդներն ու զուտ լրատվական հաղորդումները, սակայն վերջինի դեպքում, ի տարբերություն ընկերությանն այդքան հոգեհարազատ արեւմտյանի, շեշտադրումն արված է ոչ այնքան օպերատիվ եւ անաչառ տեղեկատվությանը, որքան՝ հաղորդավարուհիների հագուկապին, արտաքինին ու սեթեւեթանքին...:

Բոլորը լավ են հիշում, որ Հայաստանի երրորդ հանրապետության առաջին մեկուկես տասնամյակի հեռուստաեթերը մի աննախադեպ առանձնահատկություն ուներ: Այնտեղից իսպառ բացակայում էր ազգային երգն ու երաժշտությունը՝ ժողովրդականը, գուսանականը, ազգագրականը, Սայաթ Նովան: Փոխարենը պարտադրվում էր ինչ որ անհասկանալի երգ-երաժշտություն, որի եւ ստեղծողները, եւ կատարողները՝ որոշակի անձինք էին, իսկ սպառողները՝ միմիայն նրանց շրջապատն ու հարազատները: Ավանդույթը խախտվեց, երբ վերջերս փակված հեռուստատեսությունը, թեկուզ եւ սիրողական մակարդակով, ձեռնարկեց ժողովրդական երգին միտված իր հաղորդումները, որը գրկաբաց ընդունվեց սեփական մշակույթին կարոտած ազգաբնակչության կողմից, ինչի շնորհիվ էլ լրատվամիջոցի սեփականատիրոջը հաջողվեց ձեռք բերել ոչ պակաս ժողովրդականություն: Իսկ աննախադեպ երեւույթի ճարտարապետը, որքան էլ զարմանալի թվա, հենց պետական անունը կրող թատրոնի մինչ օրս ղեկավարն էր՝ բյուրավոր երգերի հեղինակը, որոնցից որեւէ մեկն այսօր բնականաբար չի հիշվում եւ ոչ էլ հեռարձակվում է: Միակ բացառությունը դարձյալ «Արմենիա» հեռուստաընկերությունն է, որն օրերս իր գիշերային հաղորդման մեջ հյուրընկալել էր թատրոնի ղեկավարին՝ աշխարհասփյուռ հայությանը ներկայացնելու նրա՝ ոչ միայն գլուխգործոց ստեղծագործությունները: Պարզվում է նաեւ, որ նա ամենեւին էլ հազվադեպ չի հայտնվում նույն հաճախականությամբ, հայրենիքին անգնահատելի ծառայություն մատուցած քաղաքացու իրավունքով՝ հայրենասիրական խրատներ տալիս մեղավորներիս: Նրա դժվարջնջելի «հայրենասիրական» ներդրման մասին դիպուկ է ասել երգահան Ռուբեն Հախվերդյանը. «Հայկական երգարվեստը երկու դժբախտություն ունի, որոնցից մեկը հայ երգի թուրքական ելեւէջներն են, իսկ մյուսը՝ Երգի պետական թատրոնը...»:

... Անվիճելի է, որ հայության ինքնությունը պայմանավորված է հայրենիքի գիտակցությամբ, հայոց եկեղեցով, լեզվով, մշակույթով եւ ավանդույթներով, որոնց բացակայության պայմաններում տարագիր մեր հայրենակիցները ենթարկվում են ձուլման, իսկ հայրենի ժողովուրդը վերածվում անդեմ եւ կամազուրկ զանգվածի: Հայտնի է նաեւ, որ թվարկված արժեքների տարածման կամ արգելափակման դերակատարությունը ժամանակն այսօր համարյա անմնացորդ փոխանցել է մեր ընտանիքների անբաժան ու սիրված անդամ՝ հեռուստացույցին: ...Կյանքում պատահում է, երբ ներքին ինչ-ինչ թաքնված մղումներ դրդում են չգիտակցված գործողությունների կամ էլ կաշկանդում անգործությամբ, որոնք աստիճանաբար հանգեցնում են անցանկալի հետեւանքների քո եւ ընտանիքիդ համար: Տվյալ պարագայում, առաջին հայացքից ոչ տեսանելի ճիշտ այդպիսի մի դեր է ստանձնում հեռուստատեսությունը մեր մեջ՝ ի դեմս մի ամբողջ ժողովրդի:

...Տե՛ր Աստված, փրկի՛ր մեզ անտեսանելի թշնամուց:

Մեջբերենք երջանկահիշատակ Գարեգին Առաջին Վեհափառի քարոզախոսություններից. «Տեսանելի թշնամին աչքով կը տեսնես, ինքզինքդ կը պաշտպանես եւ կրնաս խուսափիլ այն չարիքէն, որ դուրսի թշնամին կրնայ պատճառել: Ես տեսանելի թշնամիներէն շատ չեմ վախնար...: Ի՞նչ է աներեւոյթ թշնամին, եւ շատ խորունկ խօսք է: Այն թշնամին, որ մեր մէջէն կը գործէ, ... այդ թշնամին է, որ ամենէն վտանգաւորն է, որովհետեւ այդ թշնամին կը նմանի ծառի մէջէն գործող որդին, որ կուտէ աւիշը, կը չորցնէ ծառը...»:

**ԱՇՈՏ ՎԱՎՅԱՆ**

# Հայ, որը նախկինում Հայաստանում չէր եղել

## Հարցազրույց Յուրա Մովսիսյանի հետ

***Ինչպես տեղեկացրել ենք, ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի հարձակվող Յուրա Մովսիսյանը 3,5 տարվա պայմանագիր է կնքել ՌԴ պրեմիեր լիգայի առաջնության մասնակից Կրասնոդարի համանուն թիմի հետ։ Մովսիսյանը «Կրասնոդարի» հետ գտնվում էր Թուրքիայի Բելեք քաղաքում, որտեղից երեկ ուղեւորվեց Կիպրոս, որտեղ փետրվարի 9-ին մասնակցելու է Հայաստան-Վրաստան ընկերական հանդիպմանը։ Մովսիսյանը հարցազրույց է տվել «Սպորտ-էքսպրեսի» թղթակից Պավել Այլուշինին, որը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը։***




**- Սկզբում կխնդրեի ներկայանալ, քանի որ տարբեր լրատվամիջոցներում քեզ տարբեր կերպ են անվանում՝ Յուրի, Յուրիկ, Յուրա։**

- Անունս Յուրա է, դուք էլ հիշեք։ Ես հայ եմ, սակայն Հայաստանում առաջին անգամ եղել եմ միայն անցյալ տարվա օգոստոսին, երբ նորամուտս նշեցի ՀՀ հավաքականի կազմում Իրանի հետ կայացած ընկերական մրցախաղում։ Ծնվել եմ Բաքվում ու մանուկ հասակից ծնողներիս հետ տեղափոխվել եմ ԱՄՆ մշտական բնակության։ Ֆուտբոլով սկսել եմ զբաղվել Փասադենայի դպրոցում։

**- Իսկ ինչո՞ւ ֆուտբոլով, այլ ոչ թե ամերիկյան ֆուտբոլով կամ բեյսբոլով։**

- Հայրս ֆուտբոլիստ էր, մայրս՝ բասկետբոլիստուհի։ Երեւի ֆուտբոլն իմ արյան մեջ էր։ Հետո սիրահարվեցի Ռոնալդոյին, Անրիին եւ այլ «աստղերի»։

**- Քո առաջին մարզի՞չն էլ հայ էր կամ նախկին ԽՍՀՄ-ից։**

- Ոչ, Շարիֆ Զայնին եգիպտացի էր։ Սկզբում նա աշխատում էր դպրոցում, այնուհետեւ տեղափոխվեց ֆուտբոլի մասնագիտացված քոլեջ՝ իր հետ վերցնելով նաեւ ինձ։

**- Դու մանուկ հասակում հաճույքի համա՞ր ես խաղացել, թե միանգամից խնդիր ես դրել պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ դառնալ։**

- Հենց սկզբից էլ երազել եմ խաղալ պրոֆեսիոնալ ակումբում։

**- Եվ ե՞րբ կնքեցիր առաջին պայմանագիրդ։**

- 2006-ին, երբ լրացավ 19 տարիս։ Դարձա ամերիկյան ֆուտբոլի լիգայի «Կանզաս Սիթի» թիմի խաղացող։ Դա միջին մակարդակի թիմ էր։ Առաջին տարում կարծեմ գրավեցինք 8-րդ կամ 9-րդ տեղը։ Ես շատ խաղերի մասնակցեցի, սակայն միայն 5 գոլ խփեցի։ Հաջորդ տարի ինձ հրավիրեցին «Ռեալ Սոլթ Լեյք»։ Այնտեղ 2 մրցաշրջան խաղացի, 16 գոլ խփեցի ու դարձա երկրի չեմպիոն։ Այնուհետեւ տեղափոխվեցի Եվրոպա՝ դանիական «Ռանդերս»։

**- Եվրոպացի անվանի շատ ֆուտբոլիստներ մարզական կարիերայի ավարտին մեկնում են ամերիկյան թիմեր խոշոր գումարներ վաստակելու։ Ի՞նչը քեզ ստիպեց տեղափոխվել ոչ այնքան ֆուտբոլային երկիր։**

- «Ռանդերսում» իմ աշխատավարձն ավելի բարձր էր, քան ԱՄՆ-ում։ Սակայն դա չէ կարեւորը։ Ես ընտրության հնարավորություն ունեի։ Առաջարկներ էի ստացել սկանդինավյան, բելգիական եւ հոլանդական մի շարք թիմերից։ Սակայն չէի ցանկանում նստել պահեստայինների նստարանին։ Երազում էի տեղ ունենալ թիմի հիմնական կազմում։ Նման երաշխիքներ ինձ տվեց միայն «Ռանդերսը», ուստի տեղափոխվեցի Դանիա։ Առաջին մրցաշրջանում 7 գոլ խփեցի, երկրորդում՝ 10։ Դա առայժմ իմ ռեկորդն է։

**- Ստացվում է, որ Դանիայի առաջնությունում գոլ խփելն ավելի հե՞շտ է, քան ամերիկյան լիգայում։**

- Ոչ։ Պարզապես դանիական թիմն ավելի ուժեղ էր նույնիսկ ԱՄՆ-ի չեմպիոնից։ Խաղընկերներս էլ օգնեցին արդյունավետ խաղ ցուցադրել, թեեւ միայն 10-րդ տեղը զբաղեցրինք։

**- Հայաստանի հավաքականի կազմում անցկացրած 5 խաղում 3 գոլ ես խփել։ Դա հիանալի ցուցանիշ է։ Նշանակում է, որ հավաքականում քո խաղընկերներդ ավելի՞ ուժեղ են, քան «Ռանդերսի» խաղացողները։**

- Իհարկե։ Մեծ դեր խաղաց նաեւ իմ ոգեւորվածությունը։ Չէ՞ որ պաշտպանում էի իմ երկրի պատիվը, որը մինչ այդ չէի տեսել։

**- Քեզանով հետաքրքրվում էին «Կոպենհագենը», «Էսպանյոլը», էլի մի քանի ուժեղ ակումբներ։ Ինչո՞ւ ընտրեցիր «Կրասնոդարը»։**

- Հրավերներ ունեի նաեւ «Բլեքբյոռնից», «Անդերլեխտից», հոլանդական եւ գերմանական թիմերից։ Սակայն «Կրասնոդարի» նախագահ պարոն Գալիցկին ինձ պատմեց ակումբի մեծ ծրագրերի, հեռանկարների մասին ու խոստացավ, որ կլինեմ թիմի հիմնական խաղացողը։ Նա համոզեց ինձ։

**- Ճի՞շտ է, որ դու «Լոկոմոտիվ» տեղափոխվելու շեմին էիր։**

- Ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիայում ինձ տեղեկացրել էին, որ «Լոկոմոտիվից» ու Կիեւի «Դինամոյից» առաջարկներ են եղել։ Սակայն «Կրասնոդարն» ավելի համառ գտնվեց։

**- Հավանաբար տեղյակ ես, որ Սլովակիայի հավաքականին հաղթելով օգնեցիք, որ ՌԴ հավաքականը դառնա խմբի առաջատար։**

- Իհարկե տեղյակ եմ։ Ուրախ եմ Ռուսաստանին օգնելու համար (ժպտում է)։

**- Գուցե Ռուսաստանի հավաքականի հետ 2 հանդիպումներում էլ շարունակեք օգնել ռուսներին։**

- Ոչ։ Ցանկանում եմ գոլ խփել նաեւ Ռուսաստանի հավաքականին։ Ինձ համար միեւնույն է, թե ում գոլ կխփեմ։ Միայն թե Հայաստանի հավաքականը հաղթի։ Ներկայումս մեր հավաքականը շատ հեռանկարային, երիտասարդ թիմ է, որն աչքի է ընկնում արագաշարժությամբ։ Նման հավաքականի հետ դժվար է խաղալ յուրաքանչյուր մրցակցի համար։ Հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը մեր առջեւ խնդիր է դնում կոմբինացիոն խաղ ցուցադրել։ Մենք կիսում ենք մարզչի հայացքները խաղը կազմակերպելու հարցում։

**- Հավանաբար Հայաստանի հավաքականը պատրաստվում է հաղթել ռուսներին։**

- Իհարկե, մենք շատ վստահ ենք մեր ուժերին։ Մեր հավաքականը մեծ քայլերով առաջադիմում է։

**- Այսինքն գտնում ես, որ Հայաստանի հավաքականը հնարավորություն ունի եզրափակիչի ուղեգի՞ր նվաճել։**

- Մեզ համար կարեւոր են Ռուսաստանի հավաքականի հետ կայանալիք առաջիկա 2 հանդիպումները։ Եթե հաջող խաղանք, ապա եզրափակիչ փուլի ճանապարհը մեր առջեւ բաց կլինի։

**- Ինչպիսի՞ն ես պատկերացնում ՌԴ պրեմիեր լիգան։**

- Գիտեմ, որ խաղում են եվրոպական կարգի 5-6 ակումբներ՝ «Զենիթը», «Ռուբինը», ԲԿՄԱ-ն, «Լոկոմոտիվը», «Դինամոն»։ Նրանց խաղամակարդակը շատ բարձր է։

**- Ինչպե՞ս ես զգում «Կրասնոդարում»։**

- Շատ լավ։ Թիմը որակյալ եւ ուշադիր մարզիչ ունի, որը համախմբում է ֆուտբոլիստներին։

**- Քանի՞ գնդակ ես մտադիր խփել այս մրցաշրջանում։**

- Երբեք գուշակությամբ չեմ զբաղվում։ Համոզված եմ, որ եթե ամբողջ թիմով լավ խաղանք, ապա արդյու-

# Գալոյանը համեստ արդյունքի հասավ

**Լիլիթ Գալոյանն անհաջող հանդես եկավ Մոսկվայում ավարտված շախմատի մրցաշարում։ 9 հնարավորից վաստակելով 3,5 միավոր, Լիլիթը 10 մասնակիցների մեջ զբաղեցրեց 7-րդ տեղը։ Նա տոնեց ընդամենը մեկ հաղթանակ, 5 պարտիա ավարտեց ոչ-ոքի, 3-ում պարտվեց։ Լիլիթը հատկապես անհաջող խաղաց վերջնագծում՝ 3 պարտիաներում վաստակելով ընդամենը կես միավոր։ Նա պարտվեց Ալեքսանդրա Կոստենյուկին ու Վալենտինա Գունինային, ոչ-ոքի խաղաց Չժաո Սյուեի հետ։**

**Ավելի վատ հանդես եկավ ռուսաստանցի Կարինա Համբարձումովան՝ 2 միավորով եզրափակելով աղյուսակը։ 7-րդ տուրում տոնելով 2-րդ հաղթանակը Ալինա Կաշլինսկայայի**



**նկատմամբ, Կարինան պարտվեց Մարիա Ֆոմինիխին եւ Օլգա Գիրյային։**

**Մրցաշարի հաղթող ճանաչվեց աշխարհի նախկին չեմպիոնուհի, ռուսաստանցի Ալեքսանդրա Կոստենյուկը։ Նա 9 հնարավորից վաստակեց 7 միավոր ու լրացուցիչ գործակիցներով գերազանցելով մոնղոլ շախմատիստուհի Բատույագ Մոնգունտուլին, արժանացավ գլխավոր մրցանակին։ Հետաքրքրական է, որ 1-ին տեղի հավակնորդները վերջին տուրում մրցեցին միմյանց հետ։ Նրանց մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի, ինչը ձեռնտու էր Կոստենյուկին։**

**5,5 միավորով բրոնզե մեդալը նվաճեց չինացի Չժաո Սյուեն, որը լրացուցիչ գործակիցներով գերազանցեց նույնպիսի արդյունքի հասած Վալենտինա Գունինային։**



# Դավթյանն ու Նազարյանն արծաթե մրցանակակիրներ

**Փարիզում անցկացված ձյուդոյի «Մեծ սաղավարտ» մրցանակի խաղարկությունում Հայաստանը ներկայացրին 4 ձյուդոյիստներ։ 150 հազար դոլար մրցանակային ընդհանուր հիմնադրամով այս մրցաշարին մասնակցեցին 77 երկրների 514 ձյուդոյիստներ։**

**Մեր ձյուդոյիստներից երկուսը՝ Հովհաննես Դավթյանը (60 կգ) եւ Արմեն Նազարյանը (66 կգ) հասան մինչեւ եզրափակիչ, որտեղ պարտվելով մրցակիցներին, արժանացան արծաթե մեդալների։**

**60 կգ քաշայինների մրցավեճում Հովհաննես Դավթյանը հաջորդաբար պարտության մատնեց ֆրանսիացի Բապտիստ Լերոյին, վրացի Բեքկիլի Շուկվանիին, հոլանդացի Ջերոն Մորենին եւ Ուկրաինան ներկայացնող Գեորգի Զանտարիային։ Եզրափակիչում Դավթյանի մրցակիցը ուզբեկ Ռիշոդ Սոբիրովն էր։ 2009-ի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր հայ ձյուդոյիստը պարտվեց մրցակցին՝ վաստակելով 180 վարկանիշային միավոր։**

**Մինչեւ 66 կգ քաշայինների մրցավեճում Հայաստանը ներկայացրին Արմեն Նազարյանն ու Համբարձում Տոնոյանը։ Արմենը հաջորդաբար պայքարից դուրս մղեց Ղրղզստանի ներկայացուցիչ Իսլամ Բալալինովին, կորեացի Ջո Ջին Կիմին, ֆրանսիացի Լուիս Կորվալին եւ ճապոնացի Մասակի Ֆուկուոկային։ Վճռորոշ գոտեմարտում հայ ձյուդոյիստը պարտվեց ճապոնացի մեկ այլ մարզիկի՝ Ջունպեյ Մորիշիտային։ 2005-ի Եվրոպայի չեմպիոն Արմեն Նազարյանը դարձավ արծաթե մրցանակակիր՝ վաստակելով 180 վարկանիշային միավոր Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգրերի համար մղվող պայքարում։**




**Համբարձում Տոնոյանն ընդամենը 2 գոտեմարտ անցկացրեց։ Առաջինում նա հաղթեց լեհ Պավել Զագրոդնիկին, իսկ 1/8 եզրափակիչում պարտվեց ֆրանսիացի Դավիթ Լարոսեին։ Տոնոյանը վարկանիշային 36 միավոր վաստակեց։**

**Հայաստանի 4-րդ ներկայացուցիչը 2009-ի Եվրոպայի երիտասարդների չեմպիոն, 73 կգ քաշային Արսեն Բաղդասարյանն էր։ Հաղթելով Ղրղզստանի ներկայացուցիչ Ազատ Կուբակաեւին, 1/8 եզրափակիչում Արսենը պարտվեց հունգարացի Աթիլա Ունգվարիին եւ վաստակեց 36 միավոր։ Թիմային հաշվարկով մեր հավաքականը զբաղեցրեց 8-րդ տեղը։**

# Հաջող մեկնարկ

Էլինա Դանիելյանն ու Հրայր Սիմոնյանը հաջող են մեկնարկել իտալական Բոլոնիա քաղաքում անցկացվող շախմատի մրցաշարում, որին մասնակցում են 102 շախմատիստներ։ Նրանք տոնելով 2 հաղթանակ, աղյուսակը 2 միավորով գլխավորող 20 շախմատիստների թվում են։

Էլինան հաղթել է Մաուրո Գասպարին եւ Գորան Ուրոշեւիչին, Հրայրը պարտության է մատնել Պաոլո Լիտրիցոյին ու Ջուլիո Կալավալեին։

# ՀՖՖ պատվիրակությունը Կիպրոսում է

Հայաստանի ֆուտբոլային պատվիրակությունը, որի կազմում էին ՀՖՖ նախագահն ու գործկոմի անդամները, Հայաստանի ազգային հավաքականի մի խումբ ֆուտբոլիստներ, փետրվարի 6-ի երեկոյան միայն 2-րդ փորձից ուղեւորվեց Կիպրոս, որտեղ փետրվարի 9-ին Հայաստանի ազգային հավաքականն ընկերական մրցախաղ է անցկացնելու վրացիների հետ։

«Զվարթնոց» օդանավակայանից օդ բարձրանալով, ինքնաթիռում հայտնաբերված տեխնիկական անսարքությունների պատճառով օդանավի անձնակազմը որոշել է մի քանի րոպե անց վերադառնալ երեւանյան օդանավակայան։ Երեկոյան մեր պատվիրակությունը բարեհաջող վայրէջք է կատարել Կիպրոսի օդանավակայանում։

# «Շիրակը» պայմանագիր կնքեց Իգոր Լոգվինովի հետ

Գյումրիի «Շիրակը» մեկամյա պայմանագիր կնքեց բելառուս դարպասապահ Իգոր Լոգվինովի հետ, որը փորձաշրջան էր անցնում թիմում։ «Շիրակի» մարզչական կազմը դարպասապահի հարցում վերջնական որոշում կայացրեց «Իմպուլսի» հետ անցկացված ընկերական խաղից հետո։ Հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1։ Հաշիվը բացեց Զավեն Բադոյանը, խաղավերջում շիրակցի Արա Մկրտչյանը վերականգնեց հավասարակշռությունը։

«Շիրակը» երեկ մեկնեց Թուրքիայի Բելեք քաղաք, որտեղ կշարունակի նոր մրցաշրջանի նախապատրաստությունը։ Այնտեղ թիմում փորձաշրջան կանցնեն օտարերկրացի 3 ֆուտբոլիստներ։ Ընկերական առաջին խաղը «Շիրակը» կանցկացնի փետրվարի 10-ին Ուզբեկստանի «Անդիժանի» հետ։ Երեք օր անց շիրակցիները կմրցեն Բրեստի «Դինամոյի» հետ, այնուհետեւ ուժերը կչափեն Գրոդնոյի «Նեմանի» եւ լեհական «Կատովիցեի» հետ։ Թիմը Երեւան կվերադառնա փետրվարի 21-ին։

# Նահապետյանը գրավեց 8-րդ տեղը

Մոսկվայում անցկացված շախմատի ուսանողական մրցաշարում ռուսաստանցի Պողոս Նահապետյանը, որը հիանալի էր մեկնարկել՝ տոնելով 4 անընդմեջ հաղթանակ, ի վերջո 9 հնարավորից վաստակած 6 միավորով 64 մասնակիցների մեջ գրավեց 8-րդ տեղը։ Վերջին 3 տուրերում նա հաշտություն կնքեց Ալեքսեյ Պուշկովի ու Վլադիմիր Սելիվերստովի հետ եւ հաղթեց Ալեքսեյ Զիմինին։ Մրցաշարի հաղթող ճանաչվեց ռուսաստանցի Իվան Պոպովը, որը վաստակեց 7 միավոր։ 6,5-ական միավորով հաջորդ տեղերը զբաղեցրին ռուսաստանցիներ Վլադիսլավ Նոզդրաչովը, Ալեքսանդր Խարիտոնովը, Ալեքսանդր Եվդոկիմովն ու Վասիլի Պապինը։

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Օրվա հետքերով

# Չիլին եւ հնդկացիները

Վալպարաիսո նավահանգիստ: Ոչ պակաս հայտնի, քան Ուշուայան եւ Պուերտո Վիլյամսը: Այստեղ դադար են առնում սպուրտի համար, այսինքն՝ պոկումի, տեմպը արագացնելու, ինչպես դա անում են վազորդները, ավտոմրցորդները, առանձնապես սթայերները: Նպատակն այն է, որ շունչ առնես, սկսես արշավի մեկնարկը, կտրուկ փոխես երթուղին: Եվ իհարկե, թեքվես խստիվ դեպի արեւմուտք, որպեսզի երկու հազար մղոն անցնելով հասնես հռչակավոր Թուր Հեյերդալի գովերգած հրաբխային Զատկի կղզի:

Մեր ծրագրերում այդ նավահանգիստը առանձնահատուկ տեղ էր գրավում: Իրականում այն ի սկզբանե բացառել էինք: Առանց այն էլ ոչ թե երթուղի է, այլ համատարած կտրտված գծեր: Դե լավ, Լոս Անջելեսը դեռ հասկանալի է: Այնտեղ քաղաք կա, որտեղ ավելի շատ հայեր են ապրում, քան Գյումրիում (իմ սիրելի գյումրեցիները հաստատ կներեն ինձանից): Արժեր դրա համար ավելի քան մեկ ամիս կորցնել, երթուղուց դուրս անցնելով «ավելորդ» ութ հազար մղոնից էլ ավելի: Իսկ Չիլի՞ն, որ ոչ միայն Աստծուց, այլեւ հայերից է մոռացված: Պաշտոնական աղբյուրը նշում է՝ 1500 հոգի, իսկ Արգենտինայում (միաժամանակ Ուրուգվայում եւ Չիլիում) Հայաստանի դեսպանը կարծում է՝ ավելի քիչ: Բայց կան: Կա նաեւ մի շենք, որն այդպես էլ կոչվում է՝ Հայկական տուն: Ես տեսել եմ լուսանկարը: Գեղեցիկ, երկհարկանի շենք է՝ շրջանակված սաղարթախիտ բարձր ծառերով: Եվ գիտեմ, որ ներսում էլ մատուռի տարածք ունի:



Անկեղծ ասած, երբ կազմում էինք երթուղին, սիրտս ճմլվում էր: Ցավալիորեն հեռու էր, ցավալիորեն հետ ընկած եւ ցավալիորեն դժվարամատչելի՝ այցելելու համար: Բայց ճմլվում էր: Եվս մեկ «դեմ» փաստարկ կար: Այն, որ այնտեղ արդեն ոչ ոք հայերենին չի տիրապետում: Մի վաղեմի հարց, որն ինձ ամենից շատ է անհանգստացնում: Իսկ գուցե ընդհակառա՞կը: Հենց այն պատճառով, որ Հորն հրվանդանը շրջանցելու համար ձեռք թափ տվեցինք այդքան դժվարությունների վրա, հիմա արժե երթուղու գուցե ամենադժվարին հատվածում անցնել եւս մեկուկես հազար մղոն եւ հանդիպել մեր հայրենակիցներին, որոնց ոչ միայն մենք, այլեւ ընդհանրապես ոչ ոք չի ճանաչում: Եվ բացի այդ էլ, մեր ցամաքային անձնակազմի անդամ, «Ամարաս» հրատարակչության տնօրեն Արկադի Ասրիյանը զանգեց եւ ասաց, թե Չիլիից էլեկտրոնային փոստով նամակ են ուղարկել, խնդրելով այցելել իրենց:

Ցանկանում են տեսնել «Արմենիա» անունով նավը: Եվ ահա կես ճանապարհին ես պաշտեցի անձնակազմին: Ճիշտ է, ոչ ոք, այսպես ասած, չդիմադրեց, թեեւ լավ գիտեին, թե դա ինչ դժվարությունների գնով է արվելու:

Մինչեւ նավահանգիստ դեռ մեկ մղոն էլ ունեինք անցնելու, երբ դեսպանի հանձնարարությամբ իմ բջջայինին զանգեց մի մարդ, ներկայացավ եւ բարձր ասաց՝ բարեւ: Ես ուրախությունից ողջույնի բառերի մի ողջ հեղեղ ուղղեցի նրան: Պարզվեց, որ «բարեւ»-ից բացի ոչ մի բառ չգիտի: Բայց ազգանունը հիշել էի. Կույումջյան: Խուան Պաբլո Կույումջյան: Ես արդեն հասկացել էի, որ նա հայերեն ոչինչ չգիտի, բայց այնուամենայնիվ հարցրեցի՝ ճանաչո՞ւմ է արդյոք Ռիկարդո Կույումջյանին: Եվ այդժամ նա արդեն վերածվեց գնդացրի, սկզբում իսպաներեն, ապա նաեւ անգլերեն «կրակահերթով» արտաբերելով անուն-ազգանուններ: Էնրիկո Կույումջյանը իմ հեռախոսային դեռեւս անծանոթ զրուցակցի պապն է: Համենայն դեպս նա արդեն ինձ լուրջ ընդունեց հենց թեկուզ այն պատճառով, որ գիտեմ իր պապին: Որտեղի՞ց իմանար, որ ձեռքիս տակ նյութեր ունեմ աշխարհի մոտ հարյուր երկրների մասին, որտեղ հայեր են ապրում եւ ունեմ համայնքների ռահվիրաների ու ակտիվիստների անունները: Եթե մեր խոսակցությունն ավելի երկար ձգվեր, ես կասեի, որ տվյալներ ունենք նաեւ իր պապի եղբոր՝ ծովակալ Էռնան Կույումջյանի մասին: Այնպես որ, Հայկական տանը ես շատ աշխատանք կունենամ:

Եվ ահա մենք Վալպարաիսոյում ենք, ավելի ճիշտ՝ Խեգերաս արվարձանում: Նավակումբում տեղեր չկան, մանավանդ որ նախագծված է մինչեւ 60 ֆուտ երկարության նավերի համար: Մերի երկարությունը 73 է: Երկու նավակումբ ունեն, երկուսն էլ՝ մասնավոր: Մեզ խարսխի դրեցին դրանց տարածքից դուրս: Դեռ լավ է, որ օր ու գիշեր զանգում էր դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանը, որին խոստացել էին երկու օր անց մեզ տեղավորել: Փաստորեն երկու օր կորցնելու էինք: Չէ՞ որ, ինչպես արդեն ասել եմ ուղիղ ռեպորտաժում, ահագին նորոգելու բան ունենք:

Իսկ առայժմ, ավանդույթի համաձայն, մի քանի խոսք Չիլիի մասին: Վաղուց նման թեմայի չենք անդրադարձել: Եվ զարմանալի էլ չէ: Միլիոնավոր կիլոմետրեր ենք անցել Արգենտինայի եւ նույնքան էլ Չիլիի ափեզերքով, մի խոսքով, համարյա շրջան ենք գծել ողջ Հարավային Ամերիկայի շուրջը, ընդամենը երկու երկիր այցելելով:

Իսկ այս երկիրը յուրահատուկ է: Այն մի տեսակ ակտիվ հեղափոխական է: Իր անմիջական հարեւանների (Արգենտինա, Բոլիվիա, Պերու) մեջ առաջինն էր, որ 1810 թվականին անկախություն ձեռք բերեց: Իհարկե, այդ նույն Իսպանիայից: Խեղճ Իսպանիա, միանգամից զրկվեց իր հեռավոր տիրույթներից, հպատակություններից, որոնք ժամանակին նվաճել էին Կոլումբոսը, Մագելանը եւ կոնկիստադորների մի ողջ բանակ:

Նախապատրաստվելով Չիլիի հետ հանդիպմանը, ես շատ բան էի կարդացել այս զարմանալի երկրի պատմությունից, եւ ժողովուրդների ցուցակը, որոնց առանձնակի հարգանքով եմ վերաբերվում, ավելացավ եւս մեկով: Երկու-երեք դար շարունակ Մեքսիկայից մինչեւ Հրո Երկիր ընկած ահռելի տարածքների վրա ոչնչացվել են ոչ միայն բնիկները, այլեւ ամբողջ ժողովուրդներ (ացտեկները եւ ինկաները. մասնագետ-գիտնականներն ընդգծում են, որ ճիշտ է «ինկա»-ն եւ ոչ թե «ինկերը»): Եվ ավաղ, նման դեպքերում մնում են միայն մի քանի մենագրություններ մասնագետների նեղ շրջանակի համար եւ մոտավորապես այսպիսի մի տող՝ համաշխարհային հանրագիտարաններում. «Այս ժողովուրդները ստեղծել են եզակի քաղաքակրթություն»: Ստեղծողների անունները պատմությունը չի պահպանել: Բայց ահա ամենահրեշավոր կոնկիստադորները, ինչպիսիք են Էռնան Կորտեսը եւ Ֆերնանդո Պիսարրոն, մտել են պատմության մեջ:

Ի՞նչ կա զարմանալու, եթե մարդկային պատմության մեջ շատ ավելի սարսափելի օրինակներ կան: Ես դեռ վաղուց մի հոդված եմ գրել, որտեղ բերել եմ կոնկրետ անուններ իրենց սխրանքներով ու «սխրանքներով»: Մարդկությունն այսօր արդեն չի հիշում (լիովին մոռացել է, քանզի մասնագետները հաշվից դուրս են) Էդուարդ Ջեններին (հակածաղկային պատվաստման հիմնադրին), Ռոբերտ Կոխին (ժամանակակից մանրէաբանության եւ համաճարակաբանության հիմնադրին), Լուի Պաստյորին (ժամանակակից միկրոկենսաբանության եւ իմունոլոգիայի հիմնադրին եւ բժշկագիտության շատ այլ տիտանների, որոնք փրկել են (եւ հիմա էլ շարունակում են փրկել) ոչ թե միլիոնավոր, այլ միլիարդավոր մարդկանց, իսկ ահա ողջ ժողովուրդներ ու երկրներ արյան մեջ խեղդած ու ոչնչացրած Կեսարի եւ Սուլլայի, Աթիլլայի եւ Չինգիզ խանի, Հիտլերի եւ Պոլ Պոտի, Էնվերի եւ Թալեաթի անունները պատմության հերոսների շարքում են: Իսկ ինչ վերաբերում է Ստալինին, ապա այդ հրեշի անունով ինչ-որ մեկը ցանկանում է նույնիսկ իր երկրի անունը կոչել: Եվ այսօր ուրախություն ու առանձնակի բավարարվածություն ես զգում, երբ տեսնում ես, թե ինչպես են բոլոր հարավամերիկյան երկրներում, մանավանդ Չիլիում, անթաքույց սրտոդությամբ վերաբերվում հնդկացու կերպարին: Եվ դրա մեջ օրինաչափություն կա: Բնակչության 70 տոկոսը խառնածիններ են, իսկ եվրոպացիների ժառանգները կազմում են 25 տոկոս, այն դեպքում, երբ Արգենտինայում նրանք բնակչության 85 տոկոսն են: Բայց ահա Չիլիում, այսպես ասած՝ մաքուր հնդկացիների տոկոսը հինգն է: Կա մի հարց, որի պատասխանը ես պետք է ստանամ արդեն Սանտյագոյում: Դա հանցածնությունն է: Զարմանալի տվյալներ գոյություն ունեն. այնտեղ, ուր գերակշռում է, եթե կարելի է այդպես արտահայտվել, խառնածինների եւ առավել եւս մաքուր հնդկացիների արյունը, ավելի քիչ են հանցագործությունները, մանավանդ սպանությունները, բռնությունները եւ բռնաբարությունները: Ինչ վերաբերում է 1973 թվականի սեպտեմբերյան հեղաշրջմանը, ապա Ալիենդեի եւ Պինոչետի բոլոր կողմնակիցները մտնում էին քսանհինգ տոկոս կազմող, այսպես ասած, մաքուր եվրոպացիների մեջ: Սա այն նույն Եվրոպան է, որն այսօր մեզ կյանքի եւ մանավանդ կրթության կանոններ է պարտադրում: Մնացած մանրամասները կիմանանք արդեն մեր հայրենակիցներից:

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
Չիլի

---

ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ՝ ՍՈՄԱԼԻԼԵՆԴ

# Ժամանակը չէ՞ ստեղծելու նոր ՄԱԿ

Անգամ Freedom House-ը իր ամենամյա զեկույցներում չի անդրադարձել այդ երկրին, որը, սակայն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պես, ուղիղ քսան տարի անկախ է: Այդ երկրի հիմնը թարգմանվում է՝ «Խաղաղություն մեր երկրին», մայրաքաղաքն է Հարգեյսան, պետական կառավարումը՝ ժողովրդավարություն, բնակչությունը՝ ավելի քան 3,5 մլն մարդ: Այդ երկիրն ունի իր բանկը, դրամական միավորը, պետական խորհրդանիշներ՝ հիմն, դրոշ, զերբ, սահմանադրություն: Այդ երկիրը աֆրիկյան Սոմալիլենդ պետությունն է, որը 1991-ի մայիսի 18-ին հայտարարեց Սոմալիից իր անկախության մասին: Սոմալերեն եւ արաբերեն պետական լեզուներով Սոմալիլենդը այսօր ոչ մի միջազգային կառույցի՝ անգամ ՄԱԿ-ի կամ Արաբական պետությունների լիգայի անդամ չէ. երկիրը չունի համացանցային կոդ, սակայն այս ամենը չի խանգարում սոմալիլենդցիներին արդեն քսան տարի ապրել շատ ավելի խաղաղ, քան բուն Սոմալիում:

## Պատմական ակնարկ

Սոմալի հանրապետությունն առաջացել է Աֆրիկայի համար բախտորոշ 1960-ին՝ բրիտանական եւ իտալական նախկին գաղութների հիման վրա: Այդ ժամանակներից մինչեւ հիմա երկրում տիրող անկայունությունն ու քաղաքացիական պատերազմները, սոցիալական ծանր իրավիճակը շարունակվում են, որի հետեւանքով զոհվել են միլիոնից ավելի սոմալցիներ: Բացի սրանից՝ իր պատմության ողջ ընթացքում Սոմալի պետությունը տարածքային պահանջներ է ներկայացրել հարեւաններին՝ Եթովպիայի, Քենիայի եւ Ջիբութիի նկատմամբ: 1970-ին նախագահ Բարեն հայտարարեց, որ Սոմալին գնում է զարգացման սոցիալիստական ուղիով: Այս քայլով Բարեն ցանկանում էր որպես ամուր դաշնակից ստանալ ԽՍՀՄ-ին: Հենց այդ օժանդակությունը ստանալով՝ 1977-ին սոմալիական զորքերը փորձեցին գրավել եթովպիական քաղաք Օդահենը, սակայն հանդիպելով միացյալ Եթովպիայի դիմադրությանը, նահանջեցին: Ի դեպ՝ այդ կռիվներում եթովպացիներին օգնում էին կուբացիները, ավելի ուշ նաեւ նույն ԽՍՀՄ-ը, քանի որ վերջինս Եթովպիայի մեջ ավելի շատ սոցիալիստական հավակնություններ տեսավ, քան Սոմալիի: Արդեն 1991-ին երկրի ընդդիմադիր ուժերի միասնության արդյունքում Բարեն հրաժարական տվեց նախագահի պաշտոնից: Ընդդիմադիրներն իրենց հերթին չկարողացան համաձայնության գալ նոր ղեկավարի անվան շուրջը ու հենց այդ ժամանակներից ի վեր Սոմալիում սկսվեցին կլանային բախումներ ու հանցագործություններ: 2000-ին դե ֆակտո սոմալիլենդական Ջիբութի քաղաքում տեղի ունեցավ այսպես կոչված «Խաղաղության համաժողով», Սոմալիի նախագահ ընտրվեց Աբդուլկասիմ Սալադ Հասանը: Նույն համաժողովն ընտրեց նաեւ ժամանակավոր կառավարություն, որի առջեւ խնդիր դրվեց՝ հաստատել երկրի բոլոր ցեղերին, ինչն ի վերջո չհաջողվեց: 2006-ին իսլամիստները ոտքի ելան եւ նվաճեցին Սոմալիի հարավը՝ Մոգադիշո մայրաքաղաքով: Չնայած ժամանակավոր կառավարությունը եթովպական ուժերի օժանդակությամբ կարողացավ սաստել իսլամիստներին, սակայն 2008-ին նրանք նորից վերցրեցին իշխանությունը: Որոշ ժամանակ անց իսլամիստական՝ «Ալ Շաբաբ» խմբավորումը, որը ավելի վաղ հայտարարել էր իր կապերի մասին՝ «Ալ Ղաիդա»-ի հետ, գրավեց երկրի Բայդոա շրջանը, որտեղ հենց տեղակայված էր երկրից արդեն փախած ժամանակավոր կառավարության ղեկավարի բազան: Սրանից անմիջապես հետո Եթովպիան իր զորքերը հանեց Սոմալիից՝ երկիրը հուզումների մեջ թողնելով: Այնուամենայնիվ սոմալցիները ուժ գտան իրենց մեջ ընտրելու նոր նախագահի. այդ պաշտոնը զբաղեցրեց նախկին ընդդիմադիր Շարիֆ շեյխ Ահմեդը: Երկրում հաստատվող կայունությունը, սակայն, միայն թվացյալ էր: Սոմալիի հատկապես ռազմական ուժը շարունակում էր անկում ապրել, ու հենց այս պատճառով իսլամիստները 2009-ին նոր հարձակում գործեցին մայրաքաղաք Մոգադիշոյի վրա, իսկ նախագահ շեյխ Ահմեդը ստիպված դիմեց Արեւմուտքին: Վերջինս ըստ էության ոչինչ չարեց, ու այժմ էլ անկայուն Սոմալիում շարունակվում է «ծաղկել» ծովահենությունը. աֆրիկյան այս ափի մերձակայքից խուսափում են նավերը: Միայն այս կապակցությամբ ՄԱԿ-ը ընդունեց հռչակագիր, որով թույլատրեց Սոմալիի իշխանություններին՝ «ծովահենների դեմ պայքարում օգտագործել նաեւ ռազմական ուժ»:

## Շատ ավելի կայուն եւ բարվոք

Ի տարբերություն բուն Սոմալիի, Սոմալիլենդի ափերի մոտ ծովահեններ չեն լողում, երկրում իրավիճակը շատ ավելի կայուն ու բարվոք է: Սոմալիլենդի բոլոր՝ 4 ղեկավարները «ծովահենական Սոմալիի» դեմ դաշինք են առաջարկել ինչպես արաբական աշխարհին, այնպես էլ Արեւմուտքին: 2009-ին նախագահ Կահենը նման առաջարկով դիմեց նախագահ Օբամային: ԱՄՆ-ը, իհարկե, չճանաչեց Սոմալիլենդի անկախությունը, չգնաց վերջինիս հետ դաշինքի, սակայն նույն տարվա դեկտեմբերի 12-ին ամերիկյան Գուանտանամոյի բանտից ազատ արձակվեցին 2 սոմալիլենդցիներ, երբ նրանց հետ ձերբակալված սոմալցիները մնացին անազատության մեջ:

Ինչեւէ, չնայած Սոմալին ու ամբողջ աշխարհը չեն ճանաչում Սոմալիլենդ պետությունը, այդ դե ֆակտո գոյություն ունեցող պետության քաղաքացիները շարունակում են կողք կողքի՝ առանց լուրջ բախումների ապրել Սոմալիի քաղաքացիների հետ եւ ապրում են շատ ավելի ժողովրդավարական պետությունում, քան սոմալցիները:

Եվ վերջում՝ ժամանակը չէ՞ արդյոք ստեղծելու մի նոր ՄԱԿ՝ չճանաչված կամ ոչ բոլորի կողմից ճանաչված երկրների անդամակցությամբ: Որպես կանոն՝ այս երկրները, այդ թվում՝ ԼՂՀ-ն, շատ ավելի ժողովրդավարական են, քան, այսպես կոչված «մայր պետությունները», որոնք բոլորն էլ այսօրվա ՄԱԿ-ի անդամ են:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ


«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր
Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից
▼ Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն
▼ «Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար
*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*


**Հայտարարություն**

Սույն թվականի փետրվարի 16-ին, ժամը 12:00–ին ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի գյուղապետարանում տեղի կունենա «Իփրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Ալպիական» ՓՀԵԿ-ի կառուցմա շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85

**Հայտարարություն**

Արմավիրի մարզի Գայի միջնակարգ դպրոցի «Գ/Մ-ԳԱՊՁԲ-20/19» ծածկագրով 26 հունվար 2011 թ. «Ազգ» օրաթերթում տպագրված հայտարարությունը համարել չեղյալ:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 4.2.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: